

ՎԵՐՈՆԱՅԻ ԵՐԿՈՒ ԵԶՆՎԱԿԱՆՆԵՐԸ

ԿՈՄԵՏԻԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՎԱԾՈՎ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ե Ր

ՄԻԼԱՆԻ ԴՈՒՔՍԸ—Սիլվիայի հայրը:

ՎԱԼԵՆՏԻՆ } Վերոնայի երկու ազնվականները:
ՊՐՈՏԵՍՏ

ԱՆՏՈՆԻՈ—Պրոտեստի հայրը:

ՏՈՒՐԻՈ—Վալենտինի տխար ախոյանը:

ԷԳԼԱՄՈՒՐ—Սիլվիայի ընկերը նրա փախուստի մեջ:

ՍՊԻԴ—Վալենտինի ծաղրածու սպասավորը:

ԼԱՌԻՆՍ—Պրոտեստի նույնանման սպասավորը:

ՊԱՆՏԻՆՈ—Անտոնիոյի սպասավորը:

ՊԱՆԴՈԿԵՍ—որի մոտ ապրում է Ջուլիան:

ԱՎԱԶԱԿՆԵՐ:

ԶՈՒԼԻԱ—Պրոտեստի սիրածը:

ՍԻԼՎԻԱ—Վալենտինի սիրածը:

ԼՈՒՍԵՏԱ—Ջուլիայի նաժիշտը:

Սպասավորներ, երաժիշտներ:

ՏԵՍԱՐԱՆԸ՝ Երբեմն Միլանում, երբեմն Վերոնայում և Մանտուայի սահմանադիտից:



ԱՐԱՐԱՋԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարան առաջին — Հրապարակ Վերոնայում:

Մտնում են Վալենտինը և Պրոտեոսը:

ՎԱԼԵՆՏԻՆ. — Մի համոզիր ինձ, անգին Պրոտեոս,
Այն ջահել մարդիկ, որ տանն են նստում,
Նրանց մտքերը սահմանափակ են:
Թե չըշխայե՞ր սերը քո կյանքի մատաղ օրերը
Պաշտածդ աղջկա վառ հայացքներին,
Ես կխնդրեի, որ ավելի շուտ ինձ ընկերանաս
Այլ աշխարհների հրաշալիքները տեսնելու համար,
Քան տանը նստած տխուր և ծուլ-ծուլ
Ջահելությունդ մաշեա անհեթեթ պարապության մեջ:
Բայց քանի որ դու արդեն սիրում ես,
Սիրիր ուրեմն և բախտավորվիր,
Ինչպիսին ինքս կուզենամ լինել, երբ սիրել սկսեմ:
ՊՐՈՏԵՈՍ. — Վճռել ես դեռ: Դե հրաժեշտ քեզ, իմ քաղցր

Վալենտին:

Հիշիր Պրոտեոսիդ, թե պատահաբար

Քո ճամփին տեսնես աչքին արժանի հաղվագյուտ մի բան:
Կամեցիր, որ ես քեզ ընկեր լինեմ քո բախտի ժամին,
Երբ բախտավորվես, և վտանդի մեջ,
Եթե վտանգը շրջապատի քեզ:

Վշտերդ հանձնիր սուրբ աղոթքներիս,

Քանզի կլինեմ քեզ աղոթարար:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Եվ սիրո գրքի վրա կաղթե՛ս իմ բախտի համար:
ՊՐՈՏԵՈՍ.— Սիրածս գրքի վրա կաղթեմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այսինքն ծանծաղ մի գրքի վրա,

Որը գրված է խոր սիրո մասին—

Ինչպես պատանի Լևանդրը անցյալ Հելենսպոնտոսը:

ՊՐՈՏԵՈՍ.— Դա խոր պատմվածք է ավելի խորը մի սիրո

մասին,

Որովհետեւ նա մինչև ծնկները սիրահարված էր:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դա ճշմարիտ է, որովհետեւ ինքզ էլ

Մինչև ականջներ սիրահարված ես,

Չնայած, որ դու երբեք չես կտրել Հելենսպոնտոսը:

ՊՐՈՏԵՈՍ.— Մինչև ականջներ՝ մի կարծիր ալդպես:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Եվ չեմ էլ ուզում, որովհետեւ դա քեզ օգտակար չէ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ի՞նչ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սիրահարված լինել— նշանակում է

Արհամարհանք զնեւ հաւաշանքներով.

Համեստ նայվածքը՝ սիրտը կտրատող հեկեկանքներով,

Մի վայրկյան տևող երջանկությունը

Քսան մշտարթուն տանջող գիշերով:

Թե սիրուդ տիրես, վաստակես գուցե դու դժբախտություն,

Թե նրան կորցնես, գուցե ավելի դժբախտանաս դու:

Սակայն և ահպես՝ կամ խենթություն է դա խելքով գնված,

Կամ խելոքություն խենթությամբ պարտված:

ՊՐՈՏԵՈՍ.— Քո կարծիքով, ուրեմն ես խելագա՞ր եմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Քո կարծիքով, ուրեմն, ես վախենում եմ, որ կա-
պացուցես:

ՊՐՈՏԵՈՍ.— Դու սերն ես ծաղրում, իսկ ես Սերը չեմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սերը քո տերն է, որովհետեւ նա տիրում է քեզ
վրա.

Իսկ նա, ով վերցրեց գծովյան լուծը

• Երբեք չի կարող իմաստուն կոչվել:
ՊՐՈՏԵՆՍ.— Գրողներն ասում են՝ ինչպես ամենից քաղցր
կոկոնում

խժռող որդն է ապրում, այդպես էլ խժռող սերն է բնակվում
Երբեմն ամենից լուսավոր մտքում:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Եվ գրողներն նույնպես ասում են, որ այնպես,
ինչպես

Սաստիկ վաղահաս փթթող կոկոնը
Ուտվում է որդից, նախքան ծաղկելը,
Այդպես էլ դալար ու քնքուշ խելքը
Սիրով տարվելով հիմարանում է. կոկոնում խամբելով
Նա վառ գարնանը զրկվում է թփից
Եվ իր ապագա հույսերի բոլոր գեղեցիկ բերքից: Խ
Բայց ինչո՞ւ եմ ես ժամանակ վատնում քեզ խորհուրդ տալու,
Երբ անձնվեր ես այդ ջերմ ցանկության:
Կրկին հրաժեշտ: Հայրս ծովափին
Սպասում է ինձ, որ ես նավ նստեմ:

ՊՐՈՏԵՆՍ.— Ես քեզ կուղեկցեմ այնտեղ, Վալենտին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչ, անդին Պրոտեոս, այստեղ բաժանվե՛ք:

Նամակ գրիր Միլան, որ տեղյակ լինեմ
Սիրո մեջ գտած քո հաջողության և այլ անցքերին,
Որ քո ընկերոջ բացակայությամբ կ'աւտահեն քեդ:
Եվ ես էլ նույն կերպ քեզ միշտ կ'այցելեմ իմ նամակներով:

ՊՐՈՏԵՆՍ.— Յանկանում եմ քեզ Միլանում ամեն բախտավորու
թյուն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նույնը քեզ այստեղ: Դե մնաս բարով:

Դնում է:

ՊՐՈՏԵՆՍ.— Նա փառք է ուրսում, իսկ ես ընկել եմ սիրո ետեհից,
Նա լքում է իր բարեկամներին,
Որ ավելի շատ նրանց մեծարի,
Ես սիրո համար թե ինձ եմ լքում, թե ընկերներիս,
Եվ թե ամեն ինչ:
Օ՛, Զուլիա, դու ինձ կերպափոխեցիր.
Դու՝ ստիպեցիր ինձ մոռանալ իմ պարապմունքները.
Ժամանակս վատնել,

Մաքառել բարի խորհուրդների դեմ,
Աշխարհը դարձնել մի ոչնչութիւն,
Մտքերս տանջել սին երազներով, սիրտս՝ մտքերով:

Մտնում է Սպիղը:

ՍՊԻԴ.— Բարև ձեզ, պարոն Պրոտեոս: Դուք իմ տիրոջը տեսա՞ք:

ՊՐՈՏԵՈՍ.— Նա նոր դնաց նաւելու Միլան:

ՍՊԻԴ.— Քսանը մեկի՞ դեմ ես գրազ կգամ, որ նա նաւումն է,
եւ ես, ոչխարի պես մոլորվելով, նրան կորցրի:

ՊՐՈՏԵՈՍ.— Ոչխարն իսկապէս շատ հաճախակի խոտոր է
գնում,

եթե հովիվը քիչ հեռանում է:

ՍՊԻԴ.— Դուք եզրակացնում եք, ուրեմն, որ իմ տերը հովիվ է,
իսկ ես ոչխա՞ր:

ՊՐՈՏԵՈՍ.— Այո:

ՍՊԻԴ.— Ուրեմն իմ եղջուրները նրա եղջուրներն են, արթուն
լինեմ թե քնա՞ծ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ոչխարին շատ հարմար հիմար պատասխան:

ՍՊԻԴ.— Դա ապացուցում է, որ ես իսկապէս ոչխա՞ր եմ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ճշմարիտ է. իսկ տերդ հովիվ:

ՍՊԻԴ.— Ոչ, ես այդ կարող եմ հերքել շատ հասարակ տրամա-
բանությամբ:

ՊՐՈՏԵՈՍ.— Կոթվարանաս. իսկ ես այդ կապացուցեմ մի ուրի-
շով:

ՍՊԻԴ.— Հովիվն է ոչխարին փնտրում և ոչ թե ոչխարը հովիվն.
եւ եմ փնտրում իմ տիրոջը և ոչ թե իմ տերը ինձ. ուստի ես
ոչխար չեմ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ոչխարը կերի համար վազում է հովվի ետևից, հո-
վիվը կերի համար չի վազում ոչխարի ետևից: Դու ուռնիկի
համար վազում ես քո տիրոջ ետևից, քո տերը ուռնիկի համար
չի վազում քո ետևից, ուստի դու ոչխար ես:

ՍՊԻԴ.— Եվս նման մի ապացույց և ես կսկսեմ՝ կանչել «բաա՛».

ՊՐՈՏԵՈՍ.— Բայց դու լսո՞ւմ ես, նամակս տվի՞ր Զուլիային:

ՍՊԻԴ.— Այո, պարոն. ես՝ կորած ոչխարս, հանձնեցի ձեր նամա-
կը նրան՝ մոլորված ոչխարին. և նա՝ մոլորված ոչխարը ո-
չինչ չտվեց կորած ոչխարիս իմ նեղության փոխարեն...

ՊՐՈՏԵՆՈՍ.— Որովհետեւ արոտը շատ փոքր է այդ ամբողջ հոտի համար:

ՍՊԻԴ.— Եթե արոտը ծանրաբեռնված է, լավ կլիներ ոչխարը կոտորել:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ոչ, դու գրանում մոլորվեցիր, լավ կլիներ քեզ փակել փարախի մեջ:

ՍՊԻԴ.— Ոչ, պարոն, ձեր նամակը հանձնելու համար ինձ պիտի վճարել ոսկուց ոչ պակաս:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Նորից խճճվեցիր. ես փարախ եմ ասում, այսինքն ոչխարատեղ և ոչ թե փարս:

ՍՊԻԴ.— Փարախ թե փարս, ինչպես ուզում ես դասավորիր,

Դա եռապատիկ քիչ է ձեր սիրուհուն

Նամակ տանելու վարձատրությունից:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Իսկ ի՞նչ ասաց նա (Սպիղը գլխով է անում):
Նա գլխով արա՞վ:

ՍՊԻԴ.— Հա՛:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Գլխով արավ, հա՞. դուցե գրանով նա կամեցել է ասել, որ ես հաստագլուխ եմ:

ՅՊԻԴ.— Սխալ եք, պարոն. ես ձեզ ասացի նա գլխով արավ, իսկ դուք հարցնում եք գլխով արավ հա՞. և ես ձեզ ասում եմ այո:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Այդ բոլորը միասին կոչվում է հաստագլուխ:

ՍՊԻԴ.— Դուք նեղություն քաշեցիք նրանց միացնելու, ուստի վերցրեք այդ մեկը ձեր նեղությունից համար:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ոչ, ոչ, դո՛ւ վերցրու նամակը տանելու համար:

ՍՊԻԴ.— Լավ, ես զգում եմ, որ պարտավոր եմ ձեզնից տանելու...

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ի՞նչ տանելու, պարոն:

ՍՊԻԴ.— Ձեր նամակը, պարոն, շատ հապճեպորեն. և իմ նեղությունից դիմաց դուք ինձ ոչինչ չեք տալիս բացի «հաստագլուխ» բառից:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Սատանան տանի, դու սուր միտք ունես:

ՍՊԻԴ.— Բայց ոչ այնքան սրընթաց, որ կարողանամ ձեր դանդաղ քսակը բռնալ:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Լավ, վերջ տուր՝ դրան, լավ է բուն նյութը բաց անես: Ի՞նչ ասաց նա քեզ:

ՍՊԻԴ.— Բաց արեք ձեր քսակը, որ փողն ու նրա ասածները միասին հանձնվեն:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Լավ, պարոն, վերցրեք ձեր ջանքի համար:
Ի՞նչ ասաց նա քեզ:

ՍՊԻԴ.— Ճիշտն ասած, պարոն, կարծում եմ, որ ձեզ դժվար կլինի նի նրան տիրել:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ինչո՞ւ: Մի՞թե դու կարողացար նրանից այդ տպավորությունը ստանալ:

ՍՊԻԴ.— Պարոն ես նրանից ամենևին ոչինչ չկարողացա ստանալ. անգամ մի դուրիս էլ չստացա ձեր նամակն իրեն հանձնելու համար: Իսկ այդքան դաժան լինելով իմ հանդեպ, որ նրան հանձնեց ձեր զգացմունքը, վախենում եմ, որ նա նույնքան դաժան կլինի ձեր հանդեպ իր զգացմունքները ձեզ հաղորդելիս: Ոչինչ չընծայեք նրան բացի քարերից, որովհետև նա պողպատի պես կարծր է:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ի՞նչ, նա ոչինչ չասա՞ց:

ՍՊԻԴ.— Ոչինչ. և անգամ չասաց. «վերցրու այս փողը նեղությանդ համար»: Զեր առատաձեռնությունը հաստատելու համար դուք ինձ վեց պեննի տվիք, որի համար հայտնում եմ շնորհակալություն: Փոխարենը այսուհետև ձեր նամակները ինքներդ տարեք... և շայսպես, պարոն, ես ձեր ողջունը կհաղորդեմ իմ տիրոջը:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Գնա՛, գնա՛ փրկիր նավդ կործանումից:
Նա անվթար է, քանի կանգնած ևս դու նրա վրա,
Քեզ վիճակված է մեռնել ցամաքին և ոչ թե ծովում:

Սպիղը գնում է:

Ես պետք է այնտեղ ուղարկեմ մի լավ պատգամաբերի,
վախենում եմ, որ Պրուիան անտես է արել տողերս,
Առնելով դրանք այսպիսի մի փուչ նամակաբերից:

Գնում է:

Մտնում են Զուլիան և Լուսետան:

ԶՈՒԼԻԱ.— Ասա, Լուսետա, այժմ մենակ ենք,

Դու խորհուրդ կտա՞ս ինձ սիրահարվել:

ԼՈՒՍԵՏԱ.— Այո, տիրուհի, բայց չսայթաքեք անզգուշաբար:

ԶՈՒԼԻԱ.— Բոլոր գեղեցիկ աչն պարոններից,

Որոնք ամեն օր շրջապատում են ինձ զրույցներով,

Ըստ քո կարծիքի, ո՞րն է ամենից արժանի սիրո:

ԼՈՒՍԵՏԱ.— Նրանց անունները խնդրեմ ինձ ասեք

եվ ամեն մեկի մասին ձեզ կասեմ ես իմ կարծիքը,

Իմ ծանծաղ ու պարզ խելքի համեմատ:

ԶՈՒԼԻԱ.— Ի՞նչ կարծիք ունես գեղեցիկ պարոն Էդլամուրի մասին:

ԼՈՒՍԵՏԱ.— Որպես ասպետ նա լավ ճարտասան է, կոկիկ և սիրուն,

Բայց եթե ես ձեր տեղը լինեի,

Նրանով երբեք չէի հրապուրվի:

ԶՈՒԼԻԱ.— Քեզ դո՞ւր է գալիս հարուստ Մերկաչիոն:

ԼՈՒՍԵՏԱ.— Լավ կարծիք ունեմ իր գանձի մասին,

Սակայն իր մասին այսպես և այնպես...

ԶՈՒԼԻԱ.— Քեզ դո՞ւր է գալիս տղնիվ Պրոտեոսը:

ԼՈՒՍԵՏԱ.— Օ՛ր աստված, աստված, տեսեք ինչպիսի

Հիմարություն է մեզ դեկավարում:

ԶՈՒԼԻԱ.— Ի՞նչ պատահեց քեզ ինչո՞ւ հուզվեցիր նրա անունից:

ԼՈՒՍԵՏԱ.— Ներեք տիրուհի, անվայել է ինձ,

Որ ես, այսպիսի անարժան մեկու,

Համարձակվում եմ այսպես դատելու:

Այդքան շնորհալի պարոնների մասին:

ԶՈՒԼԻԱ.— Ինչո՞ւ չես ասում դու քո կարծիքը, Պրոտեոսի մասին,

Ինչպես որ այլոց մասին ասացիր:

ԼՈՒՍԵՏԱ.— Այն պատճառով, որ իմ կարծիքով նա

Ամենալավն է այդ բոլորի մեջ:

ԶՈՒԼԻԱ.— Պատճառ՞որ:

ԼՈՒՍԵՏԱ.— Մի պատճառով, որ կանանց է հատուկ.

Այդպես եմ կարծում ես նրա մասին,

Որովհետեւ ես այդպէս եմ կարծում:

ՋՈՒԼԻԱ.— Կուզենա՞ս, որ ես սեր գցեմ նրան:

ԼՈՒՍԵՏԱ.— Այո, միայն թե սերը չգցեր:

ՋՈՒԼԻԱ.— Բայց բոլորի մեջ նա է, որ երբեք ինձ չի գրավել:

ԼՈՒՍԵՏԱ.— Եվ ըստ իս նա է,

Այդ բոլորի մեջ առավել սիրում:

ՋՈՒԼԻԱ.— Սակայն նա ինձ հետ սակավ է խոսում,

Դա ցույց է տալիս, որ քիչ է սիրում:

ԼՈՒՍԵՏԱ.— Ինչքան կրակը հավաքված լինի,

Այնքան ուժգին է նա բոցավառվում:

ՋՈՒԼԻԱ.— Նրանք չեն սիրում, ովքեր որ իրենց սերը թաքցնում են:

ԼՈՒՍԵՏԱ.— Օ՛, նրանք, ովքեր իրենց սերն ամեն մարդու պատմում են,

Նրանք ամենից նվազ են սիրում:

ՋՈՒԼԻԱ.— Ես կուզենայի իր միտքն իմանալ:

ԼՈՒՍԵՏԱ.— Տիրուհի, խնդրեմ կարդաք այս թուղթը:

ՋՈՒԼԻԱ.— «Ջուլիային»: Ասա, ո՞վ է ուղարկել:

ԼՈՒՍԵՏԱ.— Կարդա՛, կիմանաս:

ՋՈՒԼԻԱ.— Ասա, ո՞վ տվեց այս նամակը քեզ:

ԼՈՒՍԵՏԱ.— Պարոն Վալենտինի մանկլավիկը տվեց:

Պրոտեոսի կողմից է կարծեմ ուղարկված:

Նա ուզում էր դա իր ձեռքով բերել,

Բայց ճանապարհին տեսնելով նրան

Ես այն վերցրի, որ ձեզ հանձնեմ:

Հանցանքիս համար խնդրեմ ինձ ներքէ:

ՋՈՒԼԻԱ.— Համեստությունս վիպ, դու լավ միջնորդ ես:

Դու հանդգնում ես ընդունել սիրո նամակներ յարդեն,

Փսիսալ ու դավել օրիորդությանս դեմ:

Հավատացիր ինձ, լա՛վ զբաղմունք է.

Եվ քեզ շա՛տ հարմար:

Վերցրու այս թուղթը. տես, որ ետ տարվի,

Թե ոչ, չերեաս այլեւ աչքիս:

ԼՈՒՍԵՏԱ.— Սիրո միջնորդ լինել — դա արժանի է առավել վարձի,

Քան ատելության:

ԶՈՒԼԻԱ.— Կգնա՞ս, թե չէ:

ԼՈՒՍԵՏԱ.— Որպեսզի սկսեք դուք լավ մտածել:

Գնում է:

ԶՈՒԼԻԱ.— Բայց կուզենայի աչքի անցկացնել ես այդ նամակը:

Սակայն ամոթ է նրան ետ կանչել

եվ լազերսել մի հանցանք ինձ համար,

Որի համար նրան ես կշտամբեցի:

Ի՛նչ հիմարն է նա. գիտե՛, օրիորդ եմ

եվ շմտածեց նամակը ուժով աչքիս մեջ կոխել:

Ըստ որում կույսերը համեստությունից,

«Ոչ» են ասում միշտ, բայց փափաղում են

«Ոչ»-ի փոխարեն «այո» հասկացվի:

Ճո՛ւ, այս հիմար սերն ինչ քմահաճ է,

Որը կամակոր երեխայի պես դայակին չանկուում

եվ իսկույն խոնարհ՝ վերքն է համբուրում:

Ի՛նչ մեծ կոպտություն մե ես կուսետային ինձնից վանեցի.

Միաժամանակ որքա՛ն կուզեի նա այստեղ լինել:

Որքան բարկացած ես աշխատեցի հոնքերս կիտել,

Երբ ներքուստ խինդը ստիպում է իմ սրտին ժպտալու:

Իմ պատիժն այն է, որ կուսետային ետ կանչեմ այստեղ

եվ ներում խնդրեմ իմ քիչ առաջվա հիմարությունս համար:

Էհե՛յ, կուսետա:

Վերադառնում է կուսետան:

ԼՈՒՍԵՏԱ.— Կսում եմ, տիրուհի:

ԶՈՒԼԻԱ.— Ճաշը շուտ կտա՞ն:

ԼՈՒՍԵՏԱ.— Կուղեի շուտ տան,

Որ դուք ձեր մաղձը թափեիք ճաշը մարսելու համար

եվ ոչ թե ձեր խեղճ աղախնի վրա:

ԶՈՒԼԻԱ.— Այդ ի՛նչ վեր առար դու զգուշորեն:

ԼՈՒՍԵՏԱ.— Ոչինչ:

ԶՈՒԼԻԱ.— Իսկ ինչո՞ւ կուացար:

ԼՈՒՍԵՏԱ.— Վերցնելու մի թուղթ,

Որ ինձնից ընկալ:

ՋՈՒԼԻԱ.— Իսկ դա ոչինչ է՞:

ԼՈՒՍԵՏԱ.— Նա ոչինչ չունի ինձ վերաբերող:

ՋՈՒԼԻԱ.— Թույլ տուր ուրեմն թող ընկած մնա

Նրա համար՝ ում վերաբերում է:

ԼՈՒՍԵՏԱ.— Օրիորդ, չի ստի նա նրան, ում որ վերաբերում է,
եթե կեղծ ձևով շմեկնաբանվի:

ՋՈՒԼԻԱ.— Ինչ որ մեկը քեզ սիրու հանգամանքում է գրել:

ԼՈՒՍԵՏԱ.— Եղանակ տվեք, որպեսզի երգեմ,

Ձեր ազնվությունը գիտե ձայնագրել:

ՋՈՒԼԻԱ.— Այդպիսի շնչին երգին հարմար է

Վերցնել «Սիրո լույս»¹⁾ երգի մեղեդին:

ԼՈՒՍԵՏԱ.— Դրա տողերը ծանր են այդ թեթև մեղեդու համար:

ՋՈՒԼԻԱ.— Ծա՞նր են, ուրեմն ծանրաբեռնված են...

ԼՈՒՍԵՏԱ.— Բայց քաղցրաձայն են, և թե դուք երգեք:

ՋՈՒԼԻԱ.— Իսկ ինչո՞ւ ոչ դու:

ԼՈՒՍԵՏԱ.— Նա մի քիչ բարձր է իմ ձայնի համար:

ՋՈՒԼԻԱ.— Տուր տեսնեմ երգը. ապա սիրունիկս...

ԼՈՒՍԵՏԱ.— Եղանակն այդ պահեք և ամբողջ երգը մինչև վերջ
կերթա:

Ճշմարիտն ասած այդ եղանակը ինձ դուր չի գալիս:

ՋՈՒԼԻԱ.— Քեզ դուր չի գալի՞ս:

ԼՈՒՍԵՏԱ.— Ոչ, դա շատ բարձր է:

ՋՈՒԼԻԱ.— Դու, սիրելիդ իմ, շատ անպատկառն ես:

ԼՈՒՍԵՏԱ.— Այժմ շատ ցածր է:

Համաչափ երգը

Դուք ավերեցիք շատ կտրուկ էջքով:

Երգելու համար պետք է չափ պահել:

ՋՈՒԼԻԱ.— Չափը կորչում է քո բամբ ձայնի մեջ:

ԼՈՒՍԵՏԱ.— Ես Պրոտեոսի կողմից եմ երգում:

ՋՈՒԼԻԱ.— Այս թուղթը լցված հիմար խոսքերով

Չպետք է ալլես նեղություն տա ինձ,

Ահա մի կապոց բողոքագիր քեզ:

Պատռում է նամակը:

Գնա, և թող այդ թերթերը մնան,

Թե մատ Էս դիպրել՝ խիստ կնեղանամ:

¹⁾ Անգլերեն «լույս» և «թեթև» (light) բառերը նույն ձևով են գրվում և արտասանվում:

ՈՒՍԵՏԱ.— Ուզում է ցույց տալ, որ այս նամակով չի
հետաքրքրվում,
Բայց ամենամեծ սիրով կուզենար
Այսպես զայրանալ մի այլ նամակով:

Գնում է:

ՋՈՒԼԻԱ.— Օ՛, երանի թե ես զայրանայի այդ նամակի վրա:
Ով գարշելի ձեռքեր, որ մաս-մաս արիք սիրտ բառերն այս:
Ոխերիմ բառեր, որ սնվում եք այս քաղցրավուն մեղրով
եվ սպանում եք ձեր խայթիչներով այն մեղուներին,
Որ շինում են այն:
Ես կհամբուրեմ ամեն մի թերթը հատուցման համար:
«Բարեսիրտ Ջուլիա»,—այսպես է գրված այս թերթի վրա:
Չարասի՛րտ Ջուլիա:
Ի պատիժ քո այդ ապերախտություն
Ես շարտում եմ անունդ այս կոշտ քարերի վրա,
Եվ անարգանքով կոխկրտում եմ քո արհամարհանքը:
Եվ տեսե՛ք, այստեղ գրված է «Միույց խոցված Պրոտեոս»:
Խեղճ խոցված անուն. կուրծքս քեզ համար
Մահիճ կլինի այնքան ժամանակ,
Մինչև որ վերքդ լրիվ ամոքվի:
Եվ այսպես, ես այս իշխան համբույրով վերքդ կզննեմ:
«Պրոտեոս» անունը երկու թե երեք
Անգամ պատահեց այս նամակի մեջ:
Լո՛ւտ, բարի քամի, ոչ մի տառ չթոցնես
Մինչև հավաքեմ բոլոր տառերը ես այս նամակի,
Բացառությամբ իմ անվան տառերի:
Թող խենթ մրրիկը տանի անունն իմ
Դեպի ռահավոր անդունդի վրա կախված քարափը
Եվ վայր գլորի նրան այնտեղից փոթորկոտ ծովը:
Ահա՛, այս տողում նրա անունն է կրկնակի գրված.—
«Խե՛ղճ, լքված Պրոտեոս, սիրավառ Պրոտեոս»:
«Քաղցրիկ Ջուլիային». ես այս անունը կպատառոտեմ.
Բայց ոչ, չե՛մ անի. նա այնքան սիրուն
Նստել է նրա դժգոհ անվան մոտ:

Ես նրանց իրար վրա կծալեմ,
Այժմ համբուրվեք, գրկվեք, վիճեցեք,
Արեք ինչ կուղեք...

Վերադառնում է Լուսեւան:

ԼՈՒՍԵՒԱՆ.— Տիրուհի, ճաշը արդեն պատրաստ է, ձեր հայրը
սպասում է:

ՋՈՒԼԻԱ.— Լավ, արի գնանք:

ԼՈՒՍԵՒԱՆ.— Ի՞նչ. այս բամբասող թերթիկներն աշատեղ ընկած
պիտի մնա՞ն:

ՋՈՒԼԻԱ.— Եթե հարգում ես, հավաքիր դետնից:

ԼՈՒՍԵՒԱՆ.— Դուք ինձ սաստեցիք ձեռք չտալ նրանց,

Բայց վերցնեմ, թե չէ կարող են մրսել...

ՋՈՒԼԻԱ.— Ես նկատում եմ, որ նրանց համար դու շատ ես
ցավում:

ԼՈՒՍԵՒԱՆ.— Այո տիրուհի, կարող եք ասել ինչ որ տեսնում եք:

Ես էլ աչքերով շատ բան եմ տեսնում,

Թեև կարծում եք աչքերս փակ են...

ՋՈՒԼԻԱ.— Դե գնա՞նք, գնա՞նք. դու ուզո՞ւմ ես դալ:

Գնում են:

ՏԵՍԱԲԱՆ ԽՐՈՐԳ — Նույն վայրը:

Մի սենյակ Անտոնիոյի տանը:

Մտնում են Անտոնիոն և Պանտինոն:

ԱՆՏՈՆԻՈ.— Ասա, Պանտինո, ի՞նչի մասին էր եղբայրս քեզ հետ

Սրահում կանգնած այդքան լուրջ խոսում:

ՊԱՆՏԻՆՈ.— Իր եղբոր որդուն՝ Պրոտեոսի մասին, որ ձեր որ-
դին է:

ԱՆՏՈՆԻՈ.— Ի՞նչ էր ասում նա:

ՊԱՆՏԻՆՈ.— Ջարմանում էր, թե ձեր ազնվությունը

Թույլ է տալիս նրան տանը վատնել իր ջահելությունը,

Մինչդեռ ձեզանից ավելի պակաս հռչակով մարդիկ

Իրենց որդիներին ուղեորում են —

Ոմանք ռազմադաշտ, փորձելու իրենց բախտը կռվի մեջ,
Ոմանք հեռավոր անհայտ կղզիներ հայտնաբերելու,
Ոմանք էլ ուսման՝ համալսարաններում.

Մեկի թե բոլոր այս արշավների համար,— ասաց նա,—

Որ Պրոտեոսը, ձեր որդին լրիվ հարմարավոր էր:

Եվ խնդրեց, որ ձեզ այնքան ձանձրացնեմ,

Որ թույլ չտաք նա տանը ալլևա ժամանակ վատնի,

Որովհետև մեծ վիշտ է ծերության օրերին հիշել,

Որ մարդ իր ջահել ժամանակ ոչ մի աշխարհ չի տեսել:

ԱՆՏՈՆԻՈ.— Կարիք չկա քեզ ինձ ձանձրացնելու այն բանի
համար,

Որի վրա ես մի ամբողջ ամիս զուլա եմ ջարդում:

Լավ կշռել եմ ես, որ ժամանակ է վատնում նա այստեղ,

Եվ կատարյալ մարդ չի կարող լինել,

Մինչև աշխարհի դպրոցով չանցնի:

Փորձը միշտ ձեռք է բերվում տքնությանմբ

Եվ ժամանակի սրբնթաց վազքում անվերջ հղկվում է:

Ուստի, ասա ինձ, ո՞ւր լավ կլինի ուղարկեմ նրան:

ՊԱՆՏՆՈ.— Ձեր ազնվությանը կարծեմ հայտնի է,

Որ Վալենտինը, նրա ընկերը պատանեկության,

Ծառայության է մտել կայսրի մոտ:

ԱՆՏՈՆԻՈ.— Ես այդ լավ գիտեմ:

ՊԱՆՏՆՈ.— Լավ կլինեք որ ձեր ազնվությունը

Պրոտեոսին էլ այնտեղ ուղարկեք:

Նա այնտեղ կսովորի ձիեր չափ պեղել, նիզակներ ճոճել,

Վարվեցողության նրբագույն ձևեր,

Եվ մասնակցել մեծ շքախաղերին,

Կզրուցի ազնիվ պարոնների հետ,

Աչքով կտեսնի ամեն վարժություն—

Արժանի նրա տարիքին և իր ազնիվ ծագումին:

ԱՆՏՈՆԻՈ.— Այդ լավ խորհուրդ է. դու լավ ես դատում.

Եվ որպեսզի դու հասկանաս, որ դա դուր եկավ սրտիս,

Այդ խորհուրդը ես ի կատար կածեմ,

Եվ ամենասուր շտապով անդամ

Նրան կուղարկեմ դեպի արքունիք:

ՊԱՆՏԻՆՈ.— Վաղը Դոն Ալֆոնսը ուրիշ հարգարժան

պարոնների հետ

Ուղևորվում են կայսրին ողջունելու

եվ ծառայելու նրա հրամանին:

ԱՆՏՈՆԻՈ.— Լավ խումբ է գնում, այդ խմբի հետ էլ Պրոտեոսը
կերթա.

Լավ ժամին եկավ: Այժմ կխոսեմ իր հետ այդ մասին:

Մտնում է Պրոտեոսը:

ՊՐՈՏԵՈՍ.— Հրաշալի սեր, հրաշալի տողեր, հրաշալի կյանք:

Սա նրա ձեռքն է, կամակատարն իր սրտի.

Ահա և նրա սիրտ երգումը՝ գրավն իր պատվի:

Օ, մեր հայրերը եթե մեր սերը ծափահարեին,

Մեր երջանկությունը կնքեին իրենց համաձայնությունը:

Օ, երկնային Զուլիա...

ԱՆՏՈՆԻՈ.— Այդ ինչ նամակ ես դու այստեղ կարդում:

ՊՐՈՏԵՈՍ.— Թող հաճո լինի ձեր ազնվության.

Մի երկու բառ է ողջագուրանքի,

Որ վալենտինը ուղարկել է ինձ

Իր մոտից եկած ընկերոջ ձեռքով:

ԱՆՏՈՆԻՈ.— Տո՛ւր ինձ նամակը, ուզում եմ տեսնել.

Նորություններ կա՞ն:

ՊՐՈՏԵՈՍ.— Նորություն չկա. դրում է միայն,

Որ լավ է ապրում, և որ բոլորը նրան սիրում են,

եվ ամենայն օր կայսրը շնորհով ծածկում է նրան:

եվ ցանկանում է, որ ես բաժանորդ լինեմ իր կյանքին:

ԱՆՏՈՆԻՈ.— Իսկ դու ինչպե՞ս ես նրա փափաքը սրտիդ ընդու-
նում:

ՊՐՈՏԵՈՍ.— Մեկի պես, որը ապավինում է ձեր իշխան կամքին

եվ կախում չունի բարեկամական նրա փափագից:

ԱՆՏՈՆԻՈ.— Կամքս մի տեսակ համաձայնվում է նրա
ցանկության:

Զմտածես, որ ես հանկարծակի այդպես վճռեցի,

Որովհետև այն, ինչ ես եմ ուզում,

ես կկատարեմ և... վերջացած է:

Ես որոշել եմ, որ առժամանակ
Վալենտինի հետ դու պիտի ապրես կայսեր պալատում:
Ինչ ապրուստի փող նա ստանում է յուրայիններից,
Նույնը կստանաս ինքդ ինձանից:
Պատրաստվիր վաղը ուղևորվելու.

Մի՛ առարկիր ինձ, վճիռս անխախտ է:

ՊՐՈՏԵՆՍ.— Տեր իմ, այդքան շուտ պատրաստ չեմ լինի,
Թույլ տվեք խորհել մեկ կամ երկու օր:

ԱՆՏՈՆԻՈ.— Ինչ որ պետք է քեզ հետո՛ կուղարկվի.

Մնալու մասին ոչ մի խոսք այլևս. վաղը պիտ մեկնենս:

Լսիր, Պանտինո, այնպես պիտի հոգաս,

Որ իսկույն Լեթ նա ճամփա ընկնի:

Անտոնինոն և Պանտինոն գնում են:

ՊՐՈՏԵՆՍ.— Եվ այսպես ահա. կրակից փախա,

Վախենալով թե կայրվեմ նրա մեջ,

Եվ նետվեցի ծով, ուր ես խեղդվում եմ:

Ջուլիայի ն սմակը ես վախեցա իմ հորը ցույց տալու,

Մտածելով, որ նա հավանություն չի տա իմ սիրուն.

Եվ իմ իսկ տված պատրվակի ուժով

Նա իմ սիրո դեմ մի անհաղթելի արգելք հարուցեց:

Օ՛, ինչ նման է սիրո դարունն այս

Ապրիլյան օրվա անհաստատ փայլին,

Երբ արեգակը շողում է ամբողջ իր գեղեցկությամբ,

Եվ հանկա՛րծ նրան ծածկում է մի ամպ:

Վերադառնում է Պանտինոն:

ՊԱՆՏԻՆՈ.— Պարոն Պրոտենոս, ձեր հայրն է կանչում—

Նա շտապում է, ուստի խնդրում եմ, նրա մոտ գնաք:

ՊՐՈՏԵՆՍ.— Այո, այդպես է. համաձայնվում է սիրտս այնտեղ
գնալ,

Բայց հազար անգամ պատասխանում է Ո՛չ, չեմ ուզում գալ:

!

Գնում են:

ԱՐԱՐԱՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարան առաջին.— Միլան: Մի սենյակ դուքսի պալատում:

Մտնում են Վալենտինը և Սպիդը:

ՍՊԻԴ.— Ձեր ձեռնոցը, պարոն...

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իմը չէ. ես իմ ձեռնոցն հագել եմ:

ՍՊԻԴ.— Ուրեմն կարող է սա՝ ձերը լինել, քանզի մի հատ է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Հա՛. ապա ցույց տուր. այո, դա իմն է:

Հրաշալի զարդ, որը պճնում է մի իր աստվածային,

Ա՜՜ Սիլվիա՛, Սիլվիա՛:

ՍՊԻԴ.— Օրիորդ Սիլվիա, օրիորդ Սիլվիա:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՜նչ ես գոռում, անբա՛ն:

ՍՊԻԴ.— Նա չի լսում, պարոն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իսկ ո՞վ հրամայեց քեզ նրան կանչել:

ՍՊԻԴ.— Դուք, ողորմած պարոն.

Եվ կամ, միգուցե, ես սխալվեցի:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դու միշտ էլ այդպես փութաջան եղիր...

ՍՊԻԴ.— Սակայն վերջերս դուք ինձ պատժեցիք, որ ես

դանդաղ եմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Լա՛վ, լսիր, պարոն, դու ճանաչո՞ւմ ես օրիորդ

Սիլվիային:

ՍՊԻԴ.— Նա՛, ում սիրում է ձեր ազնվությունը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իսկ դու ի՞նչ գիտես, որ ես սիրում եմ:

ՍՊԻԴ.— Ահավասիկ այս մասնավոր նշաններից: Նախ դուք սո-
վորել եք պարոն Պրոտեոսի նման խաչաձևել ձեր բազուկները
դժգոհ մարդու պես. կարմրալանջի պես մի սիրերդ կանչել.
խուսալիկ մարդկանցից ժանդախտով բռնվածի պես. հառաչել
դարոցականի պես, որը կորցրել է իր այբենարանը. ար-
տասվել ջահել աղջկա պես, որը թաղել է իր տատիկին. ծո՞մ

պահել հիվանդի պես, որին արգելված է շատ ուտել. անքուն մնալ մի մարդու պես, որ վախենում է թե իրեն կկողոպտեն. խոսել՝ բառերը ծոր տալով և նվալով, ինչպես մուրացկանը Զորոհներին: Կար ժամանակ, որ երբ ծիծաղում էիք, ձեր ծիծաղը նման էր աքաղաղի կախչին. երբ քայլում էիք, քայլում էիք առյուծի նման, երբ դուք ծոմ էիք պահում—այդ լինում էր անմիջապես ճաշից հետո. երբ դուք ախուր էիք երևում, նշանակում էր ձեզ մոտ փող չկար: Իսկ այժմ դուք մի օրիորդի համար այնպես եք կերպարանափոխվել, որ, երբ ես նայում եմ ձեզ, հազիվ եմ ճանաչում թե դուք իմ տերն եք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Եվ այդ բոլորը նկատում ես իմ մեջ:

ՍՊԻԴ.— Իսկ ինչո՞ւ ձեր մեջ, նրանք ձեզանից դուրս են երևում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նրանք ինձանից դուրս են երևո՞ւմ. անկարելի է:

ՍՊԻԴ.— Ոչ, դա ստույգ է, որովհետև ձեզանից դուրս ոչինչ այնքան պարզ չի երևում, որքան դրանք: Այդ բոլոր խենթությունները նշմարվում են ձեզանից դուրս, որովհետև նրանք ձեր մեջ են և թափանցում են ձեր միջով, ինչպես ջուրը միզաբանոմ, այնպես որ ուզած րաչքը, եթե ձեզ նայի, բժշկի պես իսկույն գլխի կընկնի, թե դուք ինչ հիվանդությամբ եք տառապում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սակայն ասա ինձ, դու ճանաչո՞ւմ ես օրիորդ Սիլվիային:

ՍՊԻԴ.— Նա, որին անթարթ նայում եք, երբ նստում է ընթերցու:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դու այդ նկատե՞լ ես. ասածս նա՛ է:

ՍՊԻԴ.— Ո՛չ, չեմ ճանաչում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ինչպե՞ս, տեսե՛ք ես որ նրան նայում եմ և չգիտես ով է նա:

ՍՊԻԴ.— Պարոն, դա նա չէ, որն անշնորհք է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այնքան սիրուն չէ, որքան շնորհալի:

ՍՊԻԴ.— Ես այդ լավ գիտեմ, պարոն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՞նչ գիտես:

ՍՊԻԴ.— Նա այնքան սիրուն չէ, որքան շնորհալի է ձեզ համար:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ես ուզում էի ասել՝ նրա գեղեցկությունը
գերազանց է,

բայց նրա շնորհքը չափ ու սահման չունի:

ՍՊԻԴ.— Այդ նրանից է, որ առաջինը ներկված է, իսկ երկրորդը հաշվից դուրս է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ինչպես թե ներկված է, և ի՞նչպես թե հաշվից դուրս է:

ՍՊԻԴ.— Ուզում եմ ասել, պարոն, որ նա իրեն այնպես է ներկում, որ ոչ ոք չի կարող գնահատել նրա գեղեցկությունը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իսկ դու ինձ ինչի՞ տեղ ես դրել. ես նրա գեղեցկությունը գնահատում եմ:

ՍՊԻԴ.— Դուք նրան չեք տեսել նրա տգեղանալուց ի վեր:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՞նչքան ժամանակ է, որ նա տգեղացել է:

ՍՊԻԴ.— Այն պահից, երբ դուք սիրահարվեցիք՝ նրան:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ծա նրան սիրել եմ՝ տեսնելու առաջին օրից և միշտ տեսնում եմ նրան գեղեցիկ:

ՍՊԻԴ.— Եթե դուք նրան սիրում եք, դուք չեք կարող նրան տեսնել:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ինչո՞ւ:

ՍՊԻԴ.— Որովհետև Աերը կույր է: Օ, եթե դուք իմ աչքերն ունենայիք, կամ եթե ձեր սեփական աչքերն ունենային այն ժամանակվա պայծառությունը, երբ դուք նախատում էիք սինյոր Պրոտեոսին առանց զանկապանների քայլելու համար:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՞նչ կարող էի տեսնել այդ ժամանակ:

ՍՊԻԴ.— Ձեր ներկա խենթությունը և նրա անցած այլափոխությունը. որովհետև նա սիրահարված լինելով մոռանում էր իր գուլպան կապել, իսկ դուք սիրահարվելով մոռանում եք նույն իսկ ձեր գուլպան հագնել:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ուրեմն դու սիրահարված ես, որովհետև անցյալ առավոտ դու մոռացար մաքրել իմ ոտնամանները:

ՍՊԻԴ.— Ճշմարիտ է, պարոն. ես սիրահարված էի իմ անկողնու վրա: Ես շնորհակալ եմ ձեզանից, որ դուք ինձ նկատողություն արիք, որն ինձ ավելի համարձակ է դարձնում նախատել ձեզ ձեր սիրո համար:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Մի խոսքով ես նրանով հրապուրված եմ:

ՍՊԻԴ.— Շարունակեք հրապուրվել և ձեր սերը կանցնի:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Երեկ գիշեր նա ինձնից խնդրեց գրել մեկին մի քանի տող, որին նա սիրում է:

ՍՊԻԴ.— Եվ դուք գրեցի՞ք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Գրեցի:

ՍՊԻԴ.— Տողերը չե՞ն կաղում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչ, մանչուկ, աշխատեցի ինչքան կարելի է լավ
գրել, բայց լուրջով, նա այստեղ է գալիս:

ՍՊԻԴ.— (Մեկուսի) Օ, հրաշալի գավեշտ, օ, չքնաղ տիկնիկ:
Նա այժմ կսկսի բացատրվել նրան:

Մտնում է Սիլվիան:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Օրիորդ և տիրուհի, ձեզ հազար բարի առավոտ:

ՍՊԻԴ.— (Մեկուսի) Օ', բարի երեկո մաղթեք, ողջունելու միլիո-
նավոր ձեռք կան:

ՍԻԼՎԻԱ.— Պարոն Վալենտին և ծառա, ձեզ երկու հազար:

ՍՊԻԴ.— (Մեկուսի) Տղան է պարտավոր տոկոսներ վճարել, մինչ-
դեռ նա է տալիս:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ըստ ձեր պատվերի ես ձեր անունից նամակ
գրեցի

Անհայտ անանուն ձեր բարեկամին,

Որ դժկամությունք կկատարեի,

Եթե ձեր հանդեպ պարտքս չլիներ:

ՍԻԼՎԻԱ.— Գոհ եմ ձեզանից, իմ ազնիվ ծառա.

Գրագրի վարժ ձեռքով է գրված:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Հավատացեք ինձ, շատ դժվար գրվեց,

Զիմանալով թե նամակն ումն է ուղղված,

Դիպվածքով գրեցի և մեծ կասկածով:

ՍԻԼՎԻԱ.— Գուցե կարծում եք՝ մեծ ջանք եք թափել

Այդ գործի վրա:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Օ, ոչ, տիրուհի, եթե հարկ լինի, ձեր հրամանով

Պատրաստ եմ գրել մի հազար հատ էլ:

Եվ սակայն...

ՍԻԼՎԻԱ.— Լավ վերջակետ էր: Շարունակությունը ես կռահում
եմ:

Եվ սակայն չեմ ասի, և սակայն նա ինձ չի հետաքրքրում,

Եվ սակայն ետ վերցրեք, և սակայն ձեզնից շնորհակալ եմ,

Եվ այլևս ձեզ նեղություն չեմ տա:

ՍՊԻԴ.— (Մեկուսի) Եվ սակայն կտաք:

Եվ սահայն մի ուրիշ սահայն կլինի:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՞նչ եք կամենում դրանով ասել.

Գո՞հ չեք նամակից:

ՍԻԼՎԻԱ.— Ամենևին ոչ: Տողերը չքնաղ են,

Բայց քանի որ դուք ահամայից եք նամակը գրել—
Ետ վերցրեք ուրեմն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նամակը, օրիորդ, ձեզ համար է գրված:

ՍԻԼՎԻԱ.— Այո, դուք այդ տողերը

Գրել եք, պարոն, իմ աղաշնորհով.

Բայց ես չեմ ուզում. նրանք ձեզ համար են,

Թե ես գրեի, գրած կլինեի մեծ զգացմունքով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Եթե ուզում եք՝ ես կարող եմ ձեզ ուրիշը գրել:

ՍԻԼՎԻԱ.— Եվ երբ նա գրվի,

Մի անգամ կարդացեք իբր իմ կողմից,

Թե ձեզ դուր եկավ, հրաշալի է, թե չեկավ, ոչինչ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Եթե ինձ դուր գա՝ ի՞նչ անեմ հետո:

ՍԻԼՎԻԱ.— Եթե դուր կգա՝ վերցրեք ձեր Վնասի քանքերի դիմաց:

Այժմ ձեզ բարի առավոտ մաղթեմ, իմ սպասավոր:

Գնում է:

ՍՊԻԴ.— Օ, աներեւույթ ծաղր, դու անտեսանելի և անքննելի,

Մարդու երեսին ցցված քթի պես,

Կամ աշտարակի հողմացույցի պես,

Իմ տերը ախ է քաշում նրա համար,

Իսկ նա սիրածին—իր աշակերտին սովորեցնում է,

Որ նա իր համար ուսուցիչ դառնա:

Օ, ճարպիկ հնարք. լսված կա արդյո՞ք սրանից լավը,

Որ իմ պարոնը պրագիր դարձած ինքն իրեն ուղղված նամակ
պիտ գրի:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ինչ եղավ, պարոն, ինչի՞ մասին ես ինքդ քեզ
դատում:

ՍՊԻԴ.— Հանգեր էի փնտրում, դուք ճիշտ եք, պարոն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իսկ ի՞նչ բանի մեջ:

ՍՊԻԴ.— Միջոցորդ լինելու օրիորդ Սիլվիայից:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ո՞ւմ մոտ:

ՍՊԻԴ.— Ինքներդ ձեզ մոտ. նա նշաններով ձեզ սեր բացատրեց:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՞նչ նշաններով:

ՍՊԻԴ.— Ուզում եմ ասել՝ գրավոր ձեռով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նա ինձ չի գրել:

ՍՊԻԴ.— Ի՞նչ կարիք ունի, երբ նա ստիպեց, որ ինքներդ ձեզ նամակ գրեք: Մի՞թե դուք չհասկացաք այդ կատակը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչ, հավատա ինձ:

ՍՊԻԴ.— Ձեմ հավատում ձեզ, իսկապես, պարոն: Մի՞թե չնկատեցիք նրա առհավատչյան:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նա ինձ ոչինչ չտվեց, բայց մի թթու բառից:

ՍՊԻԴ.— Բայց չէ որ նա ձեզ մի նամակ տվեց:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դա այն նամակն է, որ ես գրել եմ իր բարեկամին:

ՍՊԻԴ.— Նա այդ նամակն հանձնեց. ահա ամբողջը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Երանի գրանից վատ բան չստացվեր:

ՍՊԻԴ.— Երաշխավորում եմ, որ վատ բան չկա:

Քանզի դուք նրան հաճախ եք գրել, իսկ նա ամոթից,

Կամ շունենալով ազատ ժամանակ,

Ձի կարողացել ձեզ պատասխանել:

Կամ վախեցել է պատգամաբերից,

Որը կարող էր գաղտնիքն իր բանալ,

Եվ սերը նրան սովորեցրել է

Իր սիրեցյալին ստիպել ինքն իրեն նամակ գրելու:

Ես այդ ամենը տառացի եմ խոսում,

Որովհետեւ ես տառացի եմ գտել:

Ի՞նչ եք մտածում, պարոն, ճաշի ժամանակ է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ես ճաշել եմ:

ՍՊԻԴ.— Լավ, բայց լսեցեք պարոն. թեև քամիկներն ականջ չեն լսում, բայց ես մի մարդ եմ, որ սնվում եմ իրական ուտելիքով և այժմ ուտել եմ ուզում: Օ, չնմանվեք ձեր սիրած աղջկան. գիտե՛ք, գիտե՛ք:

Գնում է:

Տեսարան Երկրորդ.— Վերոնա. Մի սենյակի Ջուլիայի տանը:

Մտնում են Պրոտեոսը և Ջուլիան:

ՊՐՈՏԵՈՍ.— Համբերիր, Ջուլիա, դու իմ քնքուշ սեր:

ՋՈՒԼԻԱ.— Երբ ուրիշ ճար չկա պետք է համբերեմ:

ՊՐՈՏԵՈՍ.— Պատեհ առիթին կվերադառնամ:

ՋՈՒԼԻԱ.— Քանի փոխված չես, շուտ վերադարձիր.

Հիշատակն այս պահիր ի սեր Ջուլիայիդ:

Տալիս է նրան մի մատանի:

ՊՐՈՏԵՈՍ.— Լա՛վ. փոխանակենք. դու էլ սա վերցրու:

ՋՈՒԼԻԱ.— Եվ կնքենք մեր ուխտը մի սուրբ համբույրով:

ՊՐՈՏԵՈՍ.— Ահա իմ ձեռքը, որպես երաշխիք իմ անխախտ
սիրտ,

Եվ եթե մի ժամ սրահի օրվա մեջ,

Որ հառաչանքով էս քեզ շփշեմ,

Թող հաջորդ ջամբ մի մութ փորձությունք

Տանջի ինձ սիրտու մոռուցման համար:

Հայրս սպասում է, մի՛ պատասխանիր:

Մակընթացության ժամանակ է հիմա,

Բայց ոչ արցունքիդ մակընթացության,

Որը ինձ Երկար կարող է պահել, քան թե կարող եմ:

Մնաս բարո՛ւլ Ջուլիա:

Ջուլիան գնում է:

Ի՞նչ, գնաց առանց մի խոսք ասելո՞ւ:

Այո, ճշմարիտ սերն այդպես է, նա լեզու չունի,

Անկեղծությունը պճնվում է գործով և ոչ թի՛ խոսքով:

Մտնում է Պանտինոն:

ՊԱՆՏԻՆՈ.— Պարոն Պրոտեոս, ձեզ սպասում են:

ՊՐՈՏԵՈՍ.— Գնա՛, գալիս եմ:

Ավա՛ղ, ինչպես այս անջատումները

Համր են դարձնում սիրահարներին:

Գնում է:

Մտնում է Լաուսար մի շան հետ:

ԼԱՈՒՆՍ.— Ո՛չ, մի ժամ էլ կանցնի մինչև որ ես կդադարեմ արտասվելուց: Բոլոր Լաուսաները հենց այս թերությամբ են տառապում: Ես որպես անառակ որդի ստացել եմ իմ բաժինը և պարոն Պրոտեսոսի հետ ուղևորվում եմ կայսրի պալատը: Ես կարծում եմ, որ խեղդեալներ՝ իմ շունը, ամենամանավա շունն է բոլոր շների մեջ: Իմ մայրը լաց եղավ, իմ հայրը ողբաց, իմ քույրը հեկեկաց, մեր աղախինը ոռնաց, մեր կատուն վըշտից թաթերն էր գալարում, մեր ամբողջ տունը մեծ իրարանցման մեջ էր, և սակայն այս քարասիրտ շունը մի կաթիլ արցունք չթափեց. սա քար է, իսկական ժեռ քար, և շան պես անդուլթ է: Ջհուղն անգամ կարտասվեիր մեր բաժանումը տեսնելով: Մինչև անգամ իմ մեծ տատիկը. որ աչքեր չունի, հավատացնում եմ ձեզ, մեր բաժանման համար այնքան լաց եղավ, որ կուրացավ: Ոչ, ես ձեզ պիտի ցույց տամ այդ տեսարանը: Այս կոշիկը իմ հայրն է. ոչ, այս ձախ կոշիկն է իմ հայրը. ոչ, ոչ, այս ձախ կոշիկը իմ մայրն է: Ո՛չ, հարմար չի գալիս: Ասենք ինչո՞ւ է, շատ էլ հարմար է գալիս, որովհետև այս կոշիկի ներքանը ավելի շատ է մաշված: Այսպես ուրեմն, այս ծակ կոշիկը իմ մայրն է, իսկ սա իմ հայրն է. գրողը տանի, այս գավազանը իմ քույրն է, որովհետև նա շուշանի պես սպիտակ է և ճիպոտի պես բարակ: Այս գլխարկը նենձն է՝ մեր աղախինը. ես շունն եմ. ոչ, շունը թող շուն մնա, իսկ ես էլ ես: Օ՛, շունը դա ես եմ, իսկ ես էլ ես եմ: Այ, այսպե՛ս, այսպե՛ս: Հիմա ես մոտենում եմ իմ հորը. «Հայրիկ օրհնիր ինձ». բայց կոշիկը չպետք է ոչ մի խոսք ասի արտասվելու պատճառով: Այժմ ես պիտի համբուրեմ իմ հորը. լավ, նա արտաքսվում է, այժմ ես մոտենում եմ իմ մորը. օ երանի թե նա կարողանար այժմ խոսել, բայց նա կոճղի պես լուռ է: Լավ, ես համբուրում եմ նրան, ա՛յ այսպես, սա իմ մոր հեքն է բարձրանում ու իջնում. այժմ ես մոտենում եմ իմ քրոջը, տեսե՛ք թե ինչպես հեկեկում է: Շունն այս ամբողջ ժամանակ կաթիլ արցունք չի թափում և չի խո-

սում... իսկ ես, տեսե՞ք ինչպես եմ փոշին ջրում իմ արցունք-
նեքով:

Մտնում է Պանտիկոն:

ՊԱՆՏԻՆՈ.— Շտապիր, Հաունս, շտապիր նավ, քո տերն արդեն
նավ է նստել և դու պետք է մակույկով հասնես նրա ետևից:
Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես արտասվում, մարդ: Շտապիր, ա-
վանակ, դու կկորցնես մակընթացությունը, եթե ուշ հասնես
ափը...

ՀԱՌԻՆՍ.— Իսկ ի՞նչ վնաս, եթե բաց թողնեմ կապը, որովհետեւ
դա ամենադաժան կապն է, որ հրեկից եմ մի մարդ կապել է:

ՊԱՆՏԻՆՈ.— Ի՞նչն է ամենադաժան կապը:

ՀԱՌԻՆՍ.— Ես խեղդեմ— իմ շան մասին եմ խոսում:

ՊԱՆՏԻՆՈ.— Լսիր, այ մարդ, ուզում եմ ասել, որ դու կկորցնես
հոսանքը, իսկ կորցնելով հոսանքը, դու կկորցնես քո ճանա-
պարհորդությունը, իսկ կորցնելով ճանապարհորդությունը,
կկորցնես քո տիրոջը, իսկ կորցնելով քո տիրոջը, կկորցնես քո
ծառայությունը, իսկ կորցնելով քո ծառայությունը,—ինչու ես,
այ մարդ, բերանս փակում:

ՀԱՌԻՆՍ.— Որովհետեւ վախենում եմ, որ դու կկորցնես քո լե-
զուն:

ՊԱՆՏԻՆՈ.— Իսկ որտե՞ղ կկորցնեմ իմ լեզուն:

ՀԱՌԻՆՍ.— Քո կոշի մեջ:

ՊԱՆՏԻՆՈ.— Քո պոչի մե՞ջ:

ՀԱՌԻՆՍ.— Կորցնել հոսանքը և ծովագնացությունը և տիրոջը և
ծառայությունը և պարանք: Իմացիր, մարդ, եթե դետը ցամա-
քի, ես կարող եմ այն իմ արցունքներով լցնել, եթե հողմը դա-
դարի, ես կարող եմ նավը իմ հառաչանքներով քշել:

ՊԱՆՏԻՆՈ.— Շտապիր, եղբայր, շտապիր. ինձ ուղարկել են քեզ
կանչելու:

ՀԱՌԻՆՍ.— Ինչպես ուզում եք՝ կանչեք ինձ, պարոն:

ՊԱՆՏԻՆՈ.— Պիտի գնաս, թե չէ՞:

ՀԱՌԻՆՍ.— Լավ, լավ կգնամ:

Գնում են:

Մտնում են վալենտինը, Օիլվիան, Տուրիոն և Սպիրը:

ՍԻԼՎԻԱ.— 'Ծառա':

ՎԱԼԵՆՏԻՆ.— Տիրուհի':

ՍՊԻՐ.— Տեր իմ, Պարոն Տուրիոն խոսող է նստում ձեզ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սիրելույ է, մանչուկ:

ՍՊԻՐ.— Ոչ ձեզ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ուրեմն իմ սիրած աղջկան:

ՍՊԻՐ.— Լավ կլինեք, որ դուք դնդասեք նրան:

ՍԻԼՎԻԱ.— Շատ տխուր ես երևում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իսկապես, օրիորդ, այդպես թվում էմ:

ՏՈՒՐԻՈ.— Դուք թվում եք աչն, ինչ որ չե՞ք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Թերեւս այդպես է:

ՏՈՒՐԻՈ.— Ուրեմն կեղծում եք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դուք էլ եք կեղծում:

ՏՈՒՐԻՈ.— Ի՞նչ եմ ցույց տալիս, ո՞ր ինքս չունեմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Խելոքություն:

ՏՈՒՐԻՈ.— Ասեք հակառակը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ձեր հիմարությունը:

ՏՈՒՐԻՈ.— Ի՞նչի մեջ է երևում իմ հիմարությունը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ձեր բաճկոնակի:

ՏՈՒՐԻՈ.— Իմ բաճկոնակը կրկնույ է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ձեր հիմարությունը կրկնակի կհաշվեմ:

ՏՈՒՐԻՈ.— Ինչպե՞ս:

ՍԻԼՎԻԱ.— Ներանդում եք, պարոն.

Դուք փոխում եք ձեր գույներ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Բայց փողեք նրան: Նա էլ մի տեսակ բամբակոն է, օրիորդ:

ՏՈՒՐԻՈ.— Որք կուզենար սնվել ձեր արյամբ, ոչ թե ձեր օդով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Վերջացրի՞ք, պարոն:

ՏՈՒՐԻՈ.— Այո վերջացրի, աչօրվա համար դա բավական է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ես այդ լավ գիտեմ, միշտ վերջացնում եք նախքան սկսելը:

ՍԻԼՎԻԱ.— Դա բասերի լավ կրակույ է, պարոններ,

Որ արագորեն հաջորդում են իրար:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Իսկապես, օրիորդ, այդ կրակոցը պարտական ենք
մեկին:

ՍԻԼՆԵՆԱ.— Ո՞ւմ, ծառա:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ձեզ, քնքույշ օրիորդ, որովհետև դուք տվեցիք կը-
րակը: Պարոն Տուրիոն փոխ է առնում իր սրամտությունը ձեր
ազնվափայլության հայացքներից և մտխում է այն, ինչ նա
սիրով փոխ է առնում ձեր ներկայությամբ:

ՏՈՒՐԻՈ.— Պարոն, եթե դուք ինձ հետ բառեր վատնեք, ես շու-
տով կանանկացնեմ ձեր սրամտության գանձարանը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ես այդ լավ գիտեմ, պարոն, դուք ունեք բառերի
մի ճոխ գանձարան և ձեր սպասավորներին այդ բառերից
բացի, կարծեմ, ուրիշ ոչ մի գանձ չեք տալիս. որովհետև նը-
րանց մերկ նշանազգեստից երևում է, որ նրանք ապրում են
միայն ձեր մերկ խոսքերով:

ՍԻԼՆԵՆԱ.— Լռեցե՛ք, պարոններ, լռեցե՛ք, այստեղ է գալիս իմ
հայրը:

Մտնում է դուստր:

ԴՈՒՔՍ.— Օ, դուստր իմ, Սիլվիա, ծա՛նր ես պաշարված...

Պարոն Վալենտին, ձեր հայրն առողջ է:

Ի՞նչ կասեք, եթե մի նամակ լինի ձեր ընկերներից

Շատ լավ լուրերով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այնտեղից եկող ուրախ բանքերին

Ես երախտագետ կլինեմ, տեր իմ:

ԴՈՒՔՍ.— Դուք ճանաչո՞ւմ եք Դոն Պետրոնիոյին—

Ձեր հայրենակցին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այո, բարի տեր իմ. ես նրան գիտեմ

Որպես մի հարուստ և հարգարժան մարդ,

Որ իրավամբ է հռչակ վայելում:

ԴՈՒՔՍ.— Նա որդի շո՞ւնի:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ունի, բարի տեր իմ, մի որդի ունի

Իր հոր փառքին ու պատվին արժանի:

ԴՈՒՔՍ.— Լավ գիտե՞ք նրան:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ինչպես ինքս ինձ. որովհետև մենք վաղ

մանկությունից

Մեկ տեղ ենք ապրել. և միասին ենք
Մեր կյանքի բոլոր ժամերն անցկացրել:
Եվ թեպետ ինքս շատ ծուլ կամ եղել,—
Վաստնելով անդին օրերն իմ իզուր,
Զպճնելով իմ ոսկե հասակը
Հրեշտականման կատարելիությամբ,—
Բայց Պրոտեոսը,— նա այդպես է կոչվում,—
Լավ օգտագործեց և վաստակ քաղեց իր ժամանակից:
Տարիքով ջահել, իսկ փորձով մեծ է,
Գլխով դալար է, բայց մտքով հասուն,
Մի խոսքով,— քանզի արժանիքներն իր
Վեր են շռայլած իմ գովեստներից,—
Նա կատարյալ է տեսքով և խելքով,
Ազնվականին զարդարող ամեն տեսակ շնորհով:
ԴՈՒՔՍ.— Գրողը տանի,

Եթե իսկապես նա այդպիսին է,
Ուրեմն նույնքան նա արժանի է կայսրուհու սիրուն,
Որքան որ կայսրին լինել խորհրդական:
Այդ ազնվականը ինձ ներկայացավ
Մեծ իշխանների հանձնարարականով.
Եվ մտադիր է այստեղ անցկացնել մի առժամանակ:
Այդ լուրը կարծեմ ձեզ համար վատ չէ:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Թե փափագել եմ որևէ մեկին ես այստեղ տեսնել՝
Այդ նա՛ է եղել:

ԴՈՒՔՍ.— Ողջունեք նրան, ուրեմն, բայց իր արժանիքների:
Քեզ եմ ասում, Սիլվիա, և ձեզ, պարոն Տուրիո,
Քանզի Վալենտինին կարիք չեմ զգում հորդոր կարդալու
Այդ գործի համար:
Ես նրան իսկույն քեզ մոտ կուղարկեմ:

Գնում է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դա այն պարոնն է, որի մասին ձեզ պատմել եմ,
օրիորդ.

Ինձ հետ պիտի դար, թե իր տիրուհին

Նրա աչքերը չշղթայեր իր բյուրեղ հայացքին:

ՍԻԼՎԻԱ.— Միգուցե այժմ նա արձակել է նրա աչքերը,

Հաճատարմության մի այլ գրավով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ո՛չ, համոզված եմ, որ նա դեռ նրանց գերի է պահում:

ՍԻԼՎԻԱ.— Ո՛չ, այդ դեպքում նա պիտի կուրանար,

Իսկ կուրանալով

Ի՞նչպես կարող էր ճանապարհ գտնել ձեզ որոնելու:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Օրիորդ, Սերն ունի բաժնի վույդ աչքեր.

Այդպես են ասում:

ՏՈՐԻՌՈ.— Ասում են Սերը ոչ մի աչք չունի:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Որ չտեսնի քեզ պես սիրահարներին:

Երբ սերը անդուր մի բան է տեսնում՝

Աչքերն է փակում:

Մտնում է Պրոտեոսը:

ՍԻԼՎԻԱ.— Վե՛րջ կրակոցին: Այստեղ է գալիս ազնվականը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Բարի գալուստ քեզ, սիրելի Պրոտեոս: Տիրուհի,
խնդրում եմ

Նրա գալուստը հաստատեք հատուկ սիրալիրությամբ:

ՍԻԼՎԻԱ.— Իր արժանիքը երաշխիք է, որ բարով է եկել,

Եթե իսկապես սա այն ընկերն է,

Որի մասին դուք լուր էիք ուզում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նա՛ է, տիրուհի: Օ, չքնաղ օրիորդ, թույլ տվեք
որ նա

Ինձ հետ միասին ձեզ ծառա դառնա:

ՍԻԼՎԻԱ.— Որպես տիրուհի անարժան եմ շատ

Նման պատվարժան ծառայի համար:

ՊՐՈՏԵՈՍ.— Այդպես չէ, օրիորդ, նա որպես ծառա սաստիկ
նվաստ եմ

Արժանանալու ձեզ պես տիրուհու հայացքին անգամ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Թողե՛ք զրույցը ձեր արատների,

Չքնաղ տիրուհի, ընդունեք նրան ձեզ որպես ծառա:

ՊՐՈՏԵՈՍ.— Պարտքս է դրանով պարծենալ միայն և ուրիշ ոչինչ:

ՍԻԼՎԻԱ.— Կատարված պարտքը վարձատրվում է:

Ով սպասավոր, բարով եք եկել, ձեզ ողջունում է

Նվաստ տիրուհին:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Պատրաստ եմ դուրս գալ նրա դեմ, ով որ այդպես է
ասում,

Բացի ձեզանից:

ՍԻԼՎԻԱ.— Որ բարով եք եկե՛լ:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Որ դուք նվաստ եք:

Մտնում է մի սպասավոր:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Օրիորդ, իմ տերը — ձեր հայրն ուզում է

Ձրուցել ձեզ հետ:

ՍԻԼՎԻԱ.— Պատրաստ եմ իսկույն իր հրամանին:

Սպասավորը գնում է

եկ, պարոն Տուրիո,

եկ գնանք ինձ հետ: Մի անգամ ես ողջունում եմ ձեզ,

իմ նորեկ ծառա:

Ես ձեզ թողնում եմ, որ ընտանեկան գործերից խոսեք:

Երբ որ կավարտեք մեզ իմաց արեք:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Երկուսս էլ կգանք ձեզ ծառայելու:

Սիլվիան և Տուրիոն գնում են:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այժմ պատմիր ինձ, մերոնք ի՞նչպես են:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Բոլորն էլ լավ են և բոլորն էլ քեզ շատ բարե
ունեն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ձերոնք ի՞նչպես են:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ես բոլոր նրանց թողի ողջ-առողջ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սիրածդ օրիորդի մասին ի՞նչ կասես,

ի՞նչ հաջողություն ունես սիրո մեջ:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Առաջ իմ սիրո պատմությունները

Ընդունակ էին քեզ ձանձրացնելու.

Գիտեմ, որ սիրո մասին զրուցել քեզ դուր չի գալիս:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ավա՛ղ, Պրոտեսոս, բայց այդ կյանքն այժմ արդեն
փոխվել է.

Սերն անգոսելու համար ես վաղուց ապաշխարել եմ.

Սիրո բարձրագույն խորհուրդները ինձ արդեն պատժել են
Դառն պասերով և իմ զղջումի հեծկլտանքներով,
Իմ գիշերային րարտառութներով և ամենօրյա
Սիրտը կեղեքող հառաչանքներով.

Քանզի, ի վրեժ իմ կողմից սերը արհամարհելու,
Սերն հալածել է քունը իմ գերյալ աչքերից այժմ,
Նրանց հակիչներ դարձնելով սրտիս տրամոլթյան համար:
Օ, ազնիվ Պրոտեոս. Սերը զորավոր մի թագավոր է
եվ այնպես է ինձ խոնարհ դարձրել, խոստովանում եմ,
Աշխարհի վրա չկա այլ աղետ

Նրա հատուցած պատժին հավասար,
Ոչ էլ խնդովյուն՝ հավասար նրա ուրախությանը:

եվ սիրո մասին խոսելուց բացի
Այժմ ես ուրիշ էլ զրույց չունեմ:

Այժմ կրարող եմ իմ նախաճաշը, ճաշը ընթրիքը
եվ անուշ քունը փոխարինել լոկ սիրո անունով:

ՊՐՈՏԵՈՍ.— Դա բավական է. քո աչքերի մեջ քո բախտն եմ
կարդում,

Սա չէ՞ր այն կուռքը, որ դու պաշտում ես:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այո, դա նա է. մի՞թե երկնային սրբություն չէ
նա:

ՊՐՈՏԵՈՍ.— Ոչ, նա երկրային գեղեցկություն է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Կոչիր երկնային:

ՊՐՈՏԵՈՍ.— Ես շողոքորթել չեմ ուզում նրան:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Շողոքորթիր ինձ, սերը սիրում է գովեստնել
լսել:

ՊՐՈՏԵՈՍ.— Երբ հիվանդ էի, ինձ տալիս էիր դառն
գեղահատեր,

Ես ճիշտ նույն ձևով կվարվեմ քեզ հետ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ուրեմն ասա ճշմարտությունը դու նրա մասին:
Թե երկնային չէ, թող բարձր լինի

եվ հրաշալի երկրային բոլոր արարածներից:

ՊՐՈՏԵՈՍ.— Բացի իմ սիրածից:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Անգին Պրոտեոս, խնդրում եմ չանհա դու
բացառություն,

Եթե չես ուզում բացառիկ հարված հասցնել իմ սիրուն:
ՊՐՈՏԵՆՍ.— Իրավունք չունե՞մ ես գերադասել իմը բոլորից:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Ինքս քեզ կօգնեմ քո սիրածին էլ փառաբանելու:

Նա կմեծարվի ահա այս պատվով—
Թող բռնի քղանցքը սրտիս սիրուհու,

Որ նվաստ հողը առիթ չունենա

Նրա հանդերձից որևէ համբույր հափշտակելու,

Եվ պարծենալով այդպիսի անհուն մի երջանկությամբ,

Չուզենա ամռան արբեցնող ծաղիկն արմատավորել,

Դժնի ձմեռը հարատև դարձնելով:

ՊՐՈՏԵՆՍ.— Ասա, Վալենտին, ինչո՞ւ համար է այդ սին պար-
ծանքը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ներիր ինձ, Պրոտեոս. այն ամենը ինչ կարող եմ
ասել,

Ոչնչություն է նրա նկատմամբ,

Որի արժեքը ի չիք է դարձնում

Մյուս բոլորի արժանիքները:

Նա միայնակ է:

ՊՐՈՏԵՆՍ.— Թող նա այդպես էլ միայնակ մնա:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Երբեք, թեկուզ և աշխարհը ինձ տան:

Եվ գիտե՞ս, այ մարդ, նա արդեն իմն է,

Եվ ես հարուստ եմ այնպիսի գանձով,

Ինչպես քսան ծով, որոնց բոլորի ավազը եթե

Մարգարիտ լինի,

Ջրերը նեկտար, ժայռերը ձուլված անաղարտ ոսկուց:

Ներիր ինձ, որ ես մոռանում եմ քեզ,

Քանզի տեսնում եմ, որ զառանցում եմ իմ սիրո մասին:

Իմ տխմար ախոյանը, որին աղչկա հայրը

Գերադասում է ինձանից միայն

Նրա ահագին գանձերի համար,

Գնաց աղչկա հետ. և պետք է, որ ես հետևեմ նրանց

Քանզի, դու գիտես, սերը խանդով է լի:

ՊՐՈՏԵՆՍ.— Նա սիրո՞ւմ է քեզ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այո, և արդեն մենք նշանված ենք. անգամ
ավելին.

Մեր ամուսնության ժամը որոշ է
Մեր շատ խորամանկ փախուստով հանդերձ.
Ինչպես ևս պետք է վերև մագլցեմ՝ իր պատուհանը
Պարանից հյուսված անձայն սանդուխով.
Եվ ամեն հնարք ծրագրված է և համադրված իմ երջանկության:
Բարի Պրոտեոս, դնանք իմ սենյակ,
Որ այս գործերում օժանդակես ինձ քո խորհուրդներով:
ՊՐՈՏԵՈՍ.— Ինչ աշխատե՞լիս, ևս քեզ կդանեմ:
Նախ պետք է դնամ ևս իմ իրերը նավից վերցնելու,
Որ ինձ պետք են շատ
Եվ ապա իսկույն կդառնամ քեզ մոտ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Շուտ կվերջացնես:

ՊՐՈՏԵՈՍ.— Այո:

Վալենտինը և Սպիլը գնում են:

Ինչպես մի բոցը մյուսին է վառում,
Կամ թե մի գամբ ուժով մյուսին վտարում է դուրս,
Այդպես էլ ահա մի նոր սիրուհի
Վանեց իմ սրտից հիշողությունը
Առաջին սիրած աղջկա մասին:
Իմ աչքերը չեն, կամ վալենտինի գովքը չէ՞ չարդոք,
Կամ թե աղջկա իսկապես վսեմ գեղեցկությունը
Կամ իմ խաբուսիկ զանցառությունը
Ստիպում, որ ևս դատեմ այսքան խենթ:
Նա գեղեցիկ է, բայց գեղեցիկ է նույնպես և Զուլիան.
Որին սիրում եմ,—
Որին սիրում էի, որովհետև իմ սերն արդեն հալվեց,
Որ մոմից շինված պատկերի նման բոցի դեմ բռնված՝
Այնպես մաշվեց, որ ոչինչ չմնաց:
Ինձ թվում է, որ դեպի վալենտին իմ տաժած սիրը
Արդեն պաղել է,
Եվ այժմ նրան այնպես չեմ սիրում, ինչպես սիրել եմ.
Բայց իր օրիորդին շատ խոշոն եմ սիրում,

Դա է պատճառը, որ նրան այնքան քիչ եմ սիրում ես:
 Ինչպե՞ս ես պիտի խենթանամ սիրույց,
 Երբ ավելի լավ ճանաչեմ նրան,
 Երբ չճանաչած այսքան ուժգին եմ սկսել սիրել:
 Ես միայն նրա պատկերն եմ տեսել
 Եվ դա իր փայլով իմ դատողության լույսն է մթագնել,
 Իսկ երբ ես նայեմ նրա հոյակապ կատարելիության,
 Անշուշտ ես իսկույն պիտի կուրանամ:
 Թե կարողանամ զսպել խենթ սերս, կանեմ, անպայման,
 Թե չէ, կաշխատեմ, ինչ գնով լինի, տեր դառնալ նրան:

Գնում է:

Տեսարան հիմնական. — Նույն վայրը: Մի փողոց:

Մտնում են Սպիրը և Լաուենը:

ՍՊԻՐ.— Լաուենս: Պատվովս եմ երդվում, բարով ես եկել Միլան:

ԼԱՈՒՆՍ.— Մի երդվիր, սիրելի պատանի, որովհետև իմ գալուստը բարի չէ: Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ մարդուն չի կարելի սպանված համարել մինչև չկախվի. կամ որեէ վայրում երբեք ցանկալի հյուր չի կարելի համարել նրան, մինչև նա որոշ հաշիվ չվճարի և տանտիրուհին չասի «բարի գալուստ»:

ՍՊԻՐ.— Եկ գնանք, զի՛ժ, ես քեզ հենց հիմա դարեջրատուն կտանեմ, որտեղ հինգ զրոշով քեզ հինգ հազար բարի գալուստ կմաղթեն, բայց ասա, մեր սղա, քո տերը ինչպե՞ս բաժանվեց օրհորդ Ջուլիայից:

ԼԱՈՒՆՍ.— Հավատա, լրջորեն համբուրվելուց հետո կատակով բաժանվեցին:

ՍՊԻՐ.— Աղջիկը նրա հետ կամուսնանա՞:

ԼԱՈՒՆՍ.— Ոչ:

ՍՊԻՐ.— Ինչպե՞ս թե, ուրեմն սղա՞ն նրա հետ կամուսնանա:

ԼԱՈՒՆՍ.— Ոչ էլ այդ:

ՍՊԻՐ.— Զի՛նի՞ թե նրանք խզել են:

ԼԱՈՒՆՍ.— Ոչ, երկուսն էլ ձկների պես ամբողջ են:

ՍՊԻՐ.— Ուրեմն ի՞նչ է պատահել:

ԼԱՌԻՆՍ.— Ահա թե ինչ. երբ նա իրեն լավ է զգում, աղջիկն էլ իրեն լավ է զգում:

ՍՊԻԴ.— Ի՞նչ ավանակն ես դու, ես քեզ չեմ հասկանում:

ԼԱՌԻՆՍ.— Ի՞նչ հաստագլուխն ես դու, որ չես կարողանում հասկանալ, մինչդեռ ձեռնափայտս ինձ հասկանում է:

ՍՊԻԴ.— Ի՞նչ ես ասում դու:

ԼԱՌԻՆՍ.— Այո, ասում են և հաստատում. նայի՛ր, ես միայն հենվում եմ և իմ գավազանը ինձ հասկանում է:

ՍՊԻԴ.— Որ դա քո տակն է գտնվում իսկապես: Մի բանի տա՛հ գտնվելն ու խելքի տակ գտնվելը, այսինքն հասկանալը, դա միևնույն բանն է¹⁾:

ՍՊԻԴ.— Բայց դու ինձ ճշմարիտն ասա, նրանք ամուսնանալո՞ւ են:

ԼԱՌԻՆՍ.— Հարցրու իմ շանը, եթե նա այո ասի, ուրեմն ամուսնանալու են, եթե նա իր պոչը շարժի և ոչինչ չասի, միևնույն է, ամուսնանալու են:

ՍՊԻԴ.— Եզրակցությունն այն է ուրեմն, որ ամուսնանալո՞ւ են:

ԼԱՌԻՆՍ.— Այդ գաղտնիքը դու ինձնից կիմանաս միայն հանելուկի ձևով:

ՍՊԻԴ.— Լավ է, որ այդ ձևով եմ իմանում: Բայց, կառնս, դու ասում ես, որ իմ պարոնը թունդ սիրահար է՞:

ԼԱՌԻՆՍ.— Ես նրան այլ կերպ երբեք չեմ ճանաչել:

ՍՊԻԴ.— Այսինքն ինչպե՞ս:

Կառնս.— Թունդ սիրահար, ինչպես դու ինքդ ասացիր:

ՍՊԻԴ.— Այ փուչ ավանակ, դու ինձ չես հասկանում:

ԼԱՌԻՆՍ.— Հիմար, դու ինձ սխալ հասկացար, ես քո մասին չեմ ասում, այլ քո պարոնի:

ՍՊԻԴ.— Ես քեզ ասում եմ, որ իմ տերը վառվում է սիրուց:

ԼԱՌԻՆՍ.— Իսկ ես քեզ ասում եմ, իմ հոգը չ'է բոլորովին, նա վառվում է սիրուց թե ոչ: Եթե դու ուզում ես ինձ հետ գարեջրատուն գալ, պանք, եթե չես ուզում, ուրեմն դու եբրայեցի ես, ջհուդ, և արժանի չես քրիստոնեի անվան:

ՍՊԻԴ.— Ինչո՞ւ:

ԼԱՌԻՆՍ.— Որովհետև դու այնքան մարդասիրություն չունես, որ

¹⁾ Այսպեղ բառախաղ է. անգլերեն understand բառը նշանակում է «հասկանալ», բառացիորեն՝ «կանգնել տակը»:

գարշեշրի մոտ գնաս քրիստոնյայի հետ: Գալո՞ւ ես, թե չէ՝
ՍՊԻԴ.— Պատրաստ եմ ծառայելու:

Գնում են:

Տեսարան վեցերորդ.— Նույն վայրը: Մի սենյակ դուքսի պալատում:

Մտնում է Պրոտեոսը:

ՊՐՈՏԵՈՍ.— Թե Զուլիային թողնեմ՝ կլինեմ ուխտադրուժ,
եթե գեղեցիկ Սիլվիային սիրեմ՝ կլինեմ ուխտադրուժ.
Թե ընկերիս դավեմ՝ կլինեմ ավելի մեծ ուխտադրուժ:
Անգամ այն ուժը, որ հարկադրեց ինձ
Իմ այն առաջին երդումը տալու,
Դրդում է դիմել ինձ այս երիցս ուխտադրժույթյան:
Սերն հրամայեց ինձ երդում տալու,
Սերն է հրամայում երդումս դրժել:
Օ, դու գեղեցիկ, հրապուրիչ սեր, թե մեղանչել ես,
Սովորեցրո՞ւ ինձ՝ քեզնով հրապուրված քո հպատակին,
Որ ես ներեմ քեզ:
Նախ պաշտում էի ես մի փայլուն աստղ,
Այժմ պաշտում եմ երկնային մի արև:
Անզգույշ խոստումները կարող են խախտվել զգույշ վճիռով:
Նրան է պետք խելք, ում որ վճռական կամք է պակասում
Կրթելու միտքն իր վատը ավելի լավով փոխելու:
Յու, ֆու, ամոթ քեզ անպատկառ լեզու,
Ինչպես կարող ես վատ կոչել նրան,
Որի գերազանց իշխանությունը
Փառաբանել ես դու սրտի քսան հազար երդումով:
Դադարել սիրելուց—ես այդ չեմ կարող,
Եվ սակայն չարդեն ես դադարում եմ,
Եվ այն էլ այնտեղ, ուր պետք է սիրելի:
Զուլիային եմ կորցնում ե՛կ՝ Վալենտինին—
Եթե նրանց պահեմ, ի՞նձ պետք է կորցնեմ,
Եթե նրանց կորցնեմ, նրանց կորստով
Վալենտինի փոխարեն ես ինձ կգտնեմ,

Զուլիայի փոխարեն՝ կգտնեմ Սիլվիային:
 Ինքս ինձ համար ավելի ջանկ եմ ամեն ընկերից,
 Որովհետև սերը ամենաթանկն է ինքը իր համար:
 Եվ Սիլվիան՝ վկա է երկինքը,—
 Որ նրան ստեղծեց այդքան գեղեցիկ,—
 Զուլիային դարձրել է սևամորթ խափշիկ:
 Կմոռանամ, որ Զուլիան ապրում է,
 Հիշելով, որ իմ սերը իր հանդեպ արդեն մեռած է:
 Ես Վալենտինին կհամարեմ ինձ որպես թշնամի,
 Իսկ Սիլվիայի մեջ կորոնեմ մի ազնիվ ընկերոջ:
 Չեմ կարող այժմ ցույց տալ, թե որքան հաստատուն եմ ես,
 Առանց հյուսելու Վալենտինի դեմ մի դավադրություն:
 Նա այս գիշերը մտադրվել է պարանն սանդուխով
 Մագլցել դեպի չքնաղ Սիլվիայի բաց լուսամուտը,
 Իսկ ինձ,— այս գործում,— իր ախոյանին,
 Խորհրդատու է դարձրել իր համար:
 Ես իսկույն աղջկա հորը կհայտնեմ
 Նրանց ծաղկած և ծրագրված փախուստի մասին,
 Որը, մոլեգնած, կարտաքսե Վալենտինին,
 Որովհետև նա մտադրված է
 Աղջկան Տուրիոյի հետ պսակելու:
 Երբ Վալենտինը մեջտեղից դնա, ես անմիջապես
 Մի ճարպիկ խաղով տխմար Տուրիոյի ծրագրին վերջ կտամ:
 Սե՛ր, ինձ թևեր տուր իմ նպատակին արագ հասնելու,
 Ինչպես միտք տվիր այս ծրագիրը ինձ հղանալու:

Գնում է:

Տեսաբան յոթերորդ.— Վերոնա: Մի սենյակ Զուլիայի տանը:

Մտնում են Զուլիան և Լուսետան:

ԶՈՒԼԻԱ.— Խորհուրդ տուր, Լուսետա, օգնիր ինձ քնքուշիկս,
 Քաղցր սիրո մեջ աղաչում եմ քեզ:
 Դու այն տախտակն ես, որի վրա իմ բոլոր մտքերը
 Պարզ գծագրված և դրոշմված են:
 Սովորեցրու ինձ, պատմիր ինձ, ասա,

Առանց պատիվն իմ ոտնահարելու
Ի՞նչպէս կարող եմ, ի՞նչ ճանապարհով
Գնալ իմ սիրած Պրոտեոսի մոտ:

ԼՈՒՍԵՏԱ.— Ավաղ ճամփան այդ մաշող է և երկար:

ԶՈՒԼԻԱ.— Այն ուխտավորը, որ ջերմեռանդ է՝

Զի հոգնի չափել

Աշխարհի անթիվ թագավորութիւն իր թույլ քայլերով:

Եվ մանավանդ նա, որ սիրո թեւեր ունի թռչելու,

Եվ երբ թռչէն այդ ուղղված է այնքան թանկագին մեկին,

Այնպիսի վսեմ կատարելիութեան, ինչպիսին Պրոտեոսն է:

ԼՈՒՍԵՏԱ.— Ավելի լավ է համբերեք մինչև նա վերադառնա:

ԶՈՒԼԻԱ.— Օ, չգիտե՞ս միթե, իր նախածնները հոգուս սնունդն են.

Կթա ինձ, քանզի սովից մաշվում եմ

Երկար ժամանակ կերակրի կարոտ:

Իհ գիտենայիր դու սիրո ուժը,

Զյունով կարող էիր դու կրակ վառել,

Քան սիրո բոցը բռներով մարել:

ԼՈՒՍԵՏԱ.— Զեմ մտածում ձեր սիրո բոցը մարել,

Ուղում եմ միայն ուժգին կրակը ես չափավորել,

Որպեսզի շայրի բանականութեան սահմաններից դեն:

ԶՈՒԼԻԱ.— Ինչքան շատ զսպես, այնքան ավելի կրոցավառվի:

Առուն, որ հեղիկ կարկաշով է հոսում,

Դու գիտես, երբ նրան արգելակում են,

Անհամբերորեն նա մոլեգնում է:

Իսկ երբ որ նրա քնքուշ հոսանքը արդեւակ չունի,

Նա քաղցր ձայնով խոխոջում է կոկ քարերի վրա

Մեղմ համբույր տալով ամեն եղիղի,

Որ հանդիպում է իր ճանապարհին:

Եվ չայսպէս նա շատ ոլոր խորշերով առաջ է վազում

Երգով ու խաղով դեպի վայրի ծով:

Այսպէս էլ թույլ տուր ես առաջ գնամ

Եվ իմ ընթացքը դու մի խափանիր:

Ես համբերատար կլինեմ ինչպէս մի՞ հեղիկ առու,

Իմ ամեն դժվար քայլը դարձնելով ինձ դվարճութիւն,

Մինչև որ վերջին քայլը ինձ հասցնի իմ սիրածի մոտ:

Այնտեղ կգտնեմ ես հանգստութիւն,

Ինչպես երանյալ հոգին է գտնում

Իր տառապադին թափառից հետո Ելիսյան դաշտում:
ԼՈՒՍԵՏԱ.— Ի՞նչ տարազով եք ուզում դուք գնալ:

ՋՈՒԼԻԱ.— Ոչ կինարմատի, որ հեռու մնամ

Կլտի տղամարդկանց հանդիպումներից:

Քնքուշ Լուսետա, դու ինձ պատվավոր մի մանկլավիկի

Տարազ պատրաստիր:

ԼՈՒՍԵՏԱ.— Ուրեմն տիրուհի, այդ դեպքում պետք է ձեր մազը
կտրեք:

ՋՈՒԼԻԱ.— Ոչ, սիրելիդ իմ:

Ես կհամարեմ նրանց մետաքսե կապերով դլխիս

Քսան քմահաճ ճշմարիտ սիրո նուրբ հանգույցներով.—

Պատանուն վայել է լինել ֆանտաստիկ ավելի երկար,

Քան թե կարող եմ ինքս ինձ ցույց տալ:

ԼՈՒՍԵՏԱ.— Ի՞նչ ձևի կարեմ անդրավարտիքը:

ՋՈՒԼԻԱ.— Դա նույնն է, եթե ասեիր. «պարոն,

Ինչ լայնություն մի կամենում կարեմ ձեր սեղմիրանը»:

Անդամ, Լուսետա, ընտրիր այն ձևը,

Որը բոլորից ջատ ես սիրում դու:

ԼՈՒՍԵՏԱ.— Անդրավարտիքը պետք է անպայման պատիճով
հագնել:

ՋՈՒԼԻԱ.— Լուր, Լուսետա, դա տոթ կլինի:

ԼՈՒՍԵՏԱ.— Անդրավարտիքը քորոց էլ չարժե,

Եթե չունենա իր վրա պատիճ

Գնդասեղները շարելու համար:

ՋՈՒԼԻԱ.— Թե ինձ սիրում ես,

Տուր ինձ, Լուսետա, այնպիսի տարազ,

Որ կհամարես ամենից հարմար և ամենից լավ:

Բայց ասա, աղջիկ, ի՞նչ կմտածեն մարդիկ իմ մասին,

Եթե իմանան իմ շայն անսովոր ճամփորդությունը.

Ես վախենում եմ գործը վերջանա խայտառակությունք:

ԼՈՒՍԵՏԱ.— Թե այդպես եք կարծում—

Ուստի նստեք տանը և տեղից մի շարժվեք:

ՋՈՒԼԻԱ.— Ոչ, այդ չեմ անի:

ԼՈՒՍԵՏԱ.— Թե որ այդպես է գնացեք ուրեմն,

Եվ մի մտածեք, թե կրամբասեն մարդիկ ձեր մասին:

Թե Պրոտեոսը գոհ կլինի ձեր ճամփորդությունից

Երբ որ տեղ հասնեք:

Ձեզ համար մեկ չէ, թե ձեր գնալուց ով դժգոհ մնաց:

ԶՈՒԼԻԱ.— Դրանից, Լուսեա, ես երկյուղ չունեմ:

Հազար երգումներ, իր արցունքների մի ամբողջ օվկիան,
Եվ անթիվ փաստեր իր անհուն սիրո

Երաշխավոր են, որ իմ Պրոտեոսը ուրախ կլինի

Ինձ ողջունելու:

ԼՈՒՍԵԱ.— Նենգ տղամարդկանց միջոցներն են դրանք:

ԶՈՒԼԻԱ.— Ստոր մարդիկ են օգտվում դրանցով

Իրենց նույնքան ստոր գործերի համար:

Բայց Պրոտեոսը ավելի ազնիվ աստղի տակ է ծնվել.

Իր խոսքերն ուխտ են, իր երդումները՝ պատգամ,

Իր սերը լսկեղծ, իր մտքերն անբիծ:

Իր արցունքը անմեղ սուրհանդակներ են իր սրտից եկած,

Իր սիրտը հեռու խաբեությունից,

Ինչպես երկինքն է երկրից հեռու:

ԼՈՒՍԵԱ.— Երանի գտնեք նրան դուք այդպես,

Երբ հասնեք իր մոտ:

ԶՈՒԼԻԱ.— Թե ինձ սիրում ես, մի վիրավորիր դու նրան

այդպես:

Իր ազնվության մասին կազմելով նման վատ կարծիք—

Դու կարժանանաս իմ սիրույն՝ միայն սիրելով նրան.

Իսկ այժմ իսկույն իմ սենյակ զնանք,

Հաշվի առնելու թե ինչ է ինձ պետք

Հոգալ բաղձալի իմ ճամփի համար:

Այն, ինչ որ իմն է՝ ես կհանձնեմ քեզ—

Իմ ունեցվածքը, իմ կալվածները, բարի անունս:

Միայն խնդրում եմ՝ դրա փոխարեն ինձ շուտ ուղարկես:

Պատասխան չտա՛ս, չտա՛պ դեպի գործ,

Ես անհամբեր եմ ճամփա ընկնելու:

Գնում են:

ԱՐԱՐԱՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Տեսարան առաջին.— Մտնում են Դուխը, Տուրիոն և Պրոսեոսը:

ԴՈՒԽՍ.— Մեզ, պարուն Տուրիո, խնդրում եմ մի պահ առանձին
թողնեք,

Դադարեցնեք ունենք իրար ասելու:

Տուրիոն գնում է:

Պատմիր, Պրոսեոս, ի՞նչ ես ուզում ասել:

ՊՐՈՏԵՈՍ.— Իմ բարեհաճ տեր,

Այն, ինչ ուզում եմ ձեզ այժմ հայտնել,

Բարեկամության օրենքն ստիպում է ինձ դադարի պահել:

Բայց երբ հիշում եմ ես ձեր մարդասեր երախտիքները,

Որ ցույց եք տվել ինձ՝ անարժանիս,

Պարտքս մղում է ձեզ հայտնելու այն,

Ինչը աշխարհի ոչ մի դանձ ինձնից չէր կարող խլել:

Իմացիր, ուրեմն, արժանի իշխան,

Որ Վալենտինը, իմ մոտ ընկերը մտադրվել է

Այս գիշերը ձեր աղջկան տանից առևանգելու.—

Նա ինքն այդ մասին դադարի ասաց ինձ:

Ես գիտեմ, որ դուք վճռել եք նրան Տուրիոյին տալու,

Որին ձեր քնքուշ աղջիկն ատում է:

Եթե այս ձևով նրան փախցնեն՝

Դա մեծ վիշտ կլինի ձեր ծերությանը:

Ահա թե ինչո՞ւ, հանուն իմ պարտքի, ես նախընտրեցի

Իմ բարեկամին դեմ դնալու իր ձեռնարկության մեջ,

Քան թաքցնելով այդ, ձեր գլխին կիտել

Վշտերի բեռը, որ ձեզ վրա ճնշե:

Եվ անժամանակ գերեզման տանե:

ԴՈՒՔՍ.— Շնորհակալ եմ քեզնից, Պրոտեստ,
Հոգատարության համար քո շխտակ,
Քանի ապրում եմ՝ հրամայիր ինձ հատուցելու քեզ:
Նրանց այդ սերը հաճախ եմ տեսել,
Երբ պատահաբար կարծել են, թե ես խոր քուն եմ մտած,
Եվ շատ հաճախ էլ մտադրվել եմ
Ես Վալենտինին հեռացնել նրա ընկերությունից
Եվ իմ պալատից:
Բայց վախենալով, որ կարող եմ ես
Սխալվել խանդոտ կասկածներու մեջ
Եվ վիրավորել մարդուն անարդար,
Մի անզգուշություն, որից խորշել եմ,
Ուտի վարվում էի իր հետ սիրալիւ, որպեսզի գտնեմ
Այն, ինչ որ այժմ դու ինձ հայտնեցիր.
Եվ դու կարող ես վախն իմ հասկանալ:
Դիտենալով, որ մատաղ արյունը արագ է ազդվում,
Ննջարան տվի աղջկաս մի բարձր աշտարակի մեջ,
Որի բանալին ինձ մոտ է պահվում,
Ուտի չի կարող նրան այնտեղից ոչ ոք վրախցնել:

ՊՐՈՏԵՍ.— Իմացիր, ուրեմն, ազնիվ իշխան իմ,
Ծրագրել են նրանք մի միջոց.
Ինչպես նա պետք է նրա սենյակի լուսամուտն ելնի
Պարանե սանդուխով նրան ցած բերի.
Որի համար էլ ջահել սիրահարն արդեն մեկնել է
Եվ հիմա այստեղ կգա նրանով.
Եթե կամենաք կարող եք նրա ճանապարհը կտրել,
Բռնել սանդուխը:

Բայց, բարի տեղ իմ, այնպիսի վարպետ խաղով արեք դա,
Որ գլխի չընկնի, թե այդ գաղտնիքը ես եմ ձեզ բացել,
Քանզի ի սեր ձեզ— և ոչ թե դրդված
Ատելությունից իմ ընկերոջ դեմ,—

Ես որոշեցի այս ծրագրի մասին ձեզ զգուշացնել:

ԴՈՒՔՍ.— Պատվովս եմ երդվում, որ ամենեին նա չի իմանա,
Թե ես այդ մասին չնչին ակնարկ եմ քեզնից ստացել:

ՊՐՈՏԵՍՍ.— Մնաք բարով, տեր իմ,
Պարոն Վալենտինն այստեղ է գալիս:

Դնում է:

Մտնում է Վալենտինը:

ԴՈՒՔՍ.— Ո՞ր եք շտապում, պարոն Վալենտին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ներիր շնորհափայլ,

Մի սուրհանդակ է սպասում այնտեղ

Իմ նամակները բարեկամներիս տանելու համար,

Դնում եմ նրանց նրան հանձնելու:

ԴՈՒՔՍ.— Շա՞տ կարևոր են:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նրանց մեջ միայն շարադրված է,

Որ ես առողջ եմ և շատ բախտավոր ձեր պալատի մեջ:

ԴՈՒՔՍ.— Ուրեմն փույթ չէ, մի պահ ինձ մոտ կաց:

Ուզում եմ քեզ հետ ինձ խիստ մերձավոր

Մի քանի գաղտնի գործերից խոսել:

Քեզ հայտնի է, որ ես իմ բարեկամ պարոն Տուրիոյին

Ուզում եմ աղջկաս հետ ամուսնացնել:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ես այդ լավ գիտեմ, տեր իմ, և դա անկասկած

Կատարյալ գույգ է. բացի դրանից ազնվականը

Առաքինի է և առատաձեռն

Եվ օժտված է բոլոր արժանի հատկություններով,

Առնելու մի կին, ինչպիսին է ձեր չքնաղ աղջիկը:

Միթե՞ չի կարող ձեր վսեմությունը

Համոզել նրան, որ համաձայնվի:

ԴՈՒՔՍ.— Այո չի կարող, հավատացիր ինձ:

Նա շատ մռայլ է, մաղձոտ, քմահաճ,

Անհնազանդ է, հպարտ, կամակոր

Եվ չի ճանաչում պարտականություն,

Ոչ էլ իրեն ինձ աղջիկ է կարծում,

Ոչ էլ ակնածում, որ ես իր հայրն եմ:

Կարող եմ ասել, որ խորհրդիս դեմ

Իր ցույց տրված այդ գոռոզությունը

Ընդմիշտ վանել են սերն իմ նրանից:

Եվ մտածելով, որ իմ ծերություն

Յրերին նա ինձ չի սփռփելու,
Ես որոշել եմ երկրորդ կին առնել
Եվ նրան թողնել իր բախտի կամքին—
Թող նրա համար օժիտ լինի իր գեղեցկությունը—
Որովհետեւ նա չի գնահատում
Ոչ ինձ, ոչ էլ իմ հարստությունը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Շնորհափայլ տեր,

Ի՞նչով կարող եմ օգտակար լինել ձեզ այդ գործի մեջ:
ԴՈՒՔՍ.— Մի վերոնացի տիկին կա այստեղ,
մերին սիրում եմ. բայց նա սիրուն է և շատ ամոթխած
եվ անտարբեր է իմ ծերունական պերճախոսության.
Ուստի ուզում եմ, որ դու ինձ համար ուսուցիչ դառնաս,
Քանզի ես վաղուց մոռացել եմ թե
Սիրածին ինչպես պետք է դարպասել:
Բացի դրանից, բարքերն են փոխվել,
Սովորեցրու ինձ՝ ի՞նչ միջոց գտնեմ,
Որ արեափայլ նրա աչքերին ինձ արժանացնեմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Եթե բառերը չեն ազդում վրան,

Նրան գրավիր դու նվերներով:
Համր գոհարները իրենց չոռվյամբ
Հաճախ ավելի ուժգին են ազդում կանացի սրտին,
Քան թե բառերը իրենց ջերմությամբ:

ԴՈՒՔՍ.— Բայց նա իմ ընծան արհամարհել է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Երբեմն կինը արհամարհում է

Այն, ինչ որ նրան շատ է դուր գալիս:
Ուրիշն ուղարկեք. երբեք նրանից դուք ձեռք չքաշեք,
Քանզի առաջին արհամարհանքը
Ավելացնում է հետագա սերը:

Եթե նա իրեն խոժոռած ցույց տա,

Դա ամենևին ձեզ ատելուց չէ,

Այլ, որպեսզի դուք նրան ավելի ուժգնությամբ սիրեք:

Եթե սաստում է, չի նշանակում

Թե նա ուզում է, որ դուք հեռանաք,

Քանզի խենթերը գժվում են երբ որ մենակ են թողնվում:

Ինչ էլ նա ասի, դուք ետ մի կանգնեք:

Երբ նա ասում է՝ «հեռացիր ինձնից»,

Չի ուզում ասել «ինձանից գնա»:
Շողոքորթեք և դրվատեք կանանց,
Ներքողեք նրանց գեղեցկությունը,
Ինչքան էլ սև լինեն

Ասեք, որ նրանք հրեշտակների երեսներ ունեն:

Այն մարդը մարդ չէ, որ լեզու ունի,

Եթե իր լեզվով նա անկարող է մի կնոջ հաղթել:

ԴՈՒԻՔՍ.— Բայց նրան, որի մասին խոսում եմ, իր ծնողները

Խոստացել են տալ մի արժանալիոր լերիտասարդի,

Եվ հետևում են նրան այնպիսի դաժան խոստովյամբ,

Որ օր ցերեկով մուտք չունի իր մոտ ոչ մի տղամարդ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այդ դեպքում տեր իմ, ինքս գիշերով կերթամ նրա
մոտ:

ԴՈՒԻՔՍ.— Այո, բայց դռներն այնպես են փակվում

Եվ բանալիները պահվում ապահով,

Որ անհնար է նրա մոտ գնալ անգամ գիշերով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ի՞նչը կարգելի իր լուսամուտից ներս մտնել սե-
նյակ:

ԴՈՒԻՔՍ.— Նրա սենյակը գետնից շատ բարձր է

Եվ իր պատերը այնքան սեպ շինված,

Որ վեր մագլցել ոչ ոք չի կարող

Առանց իր կյանքը խիստ վտանգելու:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այդ դեպքում նուրբ գործված պարանե մի սանդուխ

Երկու ամբակուռ կեռերից ձգված՝

Կարող է հանդուգն Լեանդրին օգնել որպես ելարան

Հերոյի աշտարակն ելնելու համար:

ԴՈՒԻՔՍ.— Այժմ, քանի որ դու քո արյունով ազնվական ես,

Մի խորհուրդ տուր ինձ, որտեղի՞ց հարեմ այդ սանդուխը ես:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ասեք խնդրեմ, տեր իմ, նա ե՞րբ է պետք ձեզ:

ԴՈՒԻՔՍ.— Հենց այս գիշերը, որովհետև սերը երեխայի պես

Ինչ ձեռքն է ընկնում ուզում է վերցնել:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ժամը յոթի մոտ ես ձեզ նման մի սանդուխ կհա-
րեմ:

ԴՈՒԻՔՍ.— Բայց լսիր դու ինձ, ես մենակ պիտի գնամ նրա մոտ:

Սանդուխը ինչպե՞ս հասցնեմ այնտեղ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նա այնքան թեթև կլինի, տե՛ր իմ,

Որ դուք ինքներդ կարող եք տանել,

Դրած մի երկար վերարկուի տակ:

ԴՈՒՔՍ.— Վերարկուիդ չափ որ երկար լինի, դա բավական է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այո, բարի տեղ իմ:

ԴՈՒՔՍ.— Թույլ տուր, ուրեմն, տեսնել վերարկուդ.

Ճիշտ այս լայնությունը ես ինձ համար մի ուրիշը կվերցնեմ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Որեւէ վերարկու կարող է դրան ծառայել, տեղ իմ:

ԴՈՒՔՍ.— Իսկ ինչպե՞ս հաղնեմ:

Խնդրում եմ թույլ տուր վերարկուդ հաղնեմ, տեսնեմ հարմա՞ր է:

Այս ի՞նչ նամակ է: Ի՞նչպես «Սիլվիային»—

Ահա և Ծրագրիս հարմար գործիքը:

Համարձակվում եմ կնիքը քանդել մի անգամ գոնե:

«Մտածումներս իմ Սիլվիայի մոտ

Ապաստարան են գտնում գիշերով.

Նրանք բոլորը իմ ստրուկներն են

Եվ ես եմ նրանց նետում թռիչքով:

Օ՛, եթե նրանց տերն այդպես թեթև

Ընդունակ լիներ ճախրել թևաբաց,

Ինքը կգտներ ապաստան այնտեղ,

Ուր իր անզգա մտքերն են պառկած:

Օ՛, իմ սուրհանդակ մտքերն հանդուժ են

Կուսական կրծքիդ վրա սիրակեղ,

Մինչդեռ ես՝ նրանց թաղավորը մեծ,

Որ ուղարկում եմ նրանց դեպի քեզ,

Նզովում եմ այն գգվանքը, որով

Երջանկացնում ես նրանց քո զրկում,

Որովհետեւ այդ հպատակներիս

Երջանիկ բախտը ինքս եմ փափագում:

Նզովում եմ ինձ, քանդի ես ինքս եմ նրանց ուղարկել,

Որ ապավինեն այն կրծքի վրա,

Ուր պետք է նրանց իշխանը լիներ»:

Իսկ այստեղ ի՞նչ կա:

«Սիւլվիա այս գիշեր ես քեզ կազատեմ»:

Այդպէս ուրեմն, և այս սահմանին էլ դրա համար է:
Ի՞նչ, չի՞նի՞ դու Մերոպսի որդի Ֆանտոնի պես

Վարել ես տենչում երկնային կառքը

Եվ քո սանձարձակ խելագարութեամբ աշխարհը շարե՞լ:

Մի՞թե ուզում ես աստղերին հասնել հենց նրա համար,
Որ նրանք գլխիդ վրա են փայլում:

Զբոլի աշտեղից, անարգ միջամուխ, փոքրոգի ստրուկ,

Շնորհիւր քծնող քո ժպիտները քեզ նման մարդկանց

Եվ մտածիր, որ եթե այստեղից

Այժմ անպատիժ պիտի հեռանաս,

Դրա համար դու պարտական ես իմ համբերութեանը

Եվ ոչ թե քո մեծ արժանիքներին:

Այժմ առավել դո՛հ եղիր ինձնից դու սրա համար,

Քան թե այն բոլոր սիրալիրութեան,

Որ առատորեն շնորհել եմ քեզ:

Բայց եթե մնաս դու իմ երկրի մեջ

Ավելի երկար, քան թե սրբնթաց արագութեամբ

Քեզ միջոց կտա մեր արքայական պալատը թողնել,

Երկնով եմ երդւում, որ իմ ցասումը

Չափազանց հեռու կանցնի այն սիրուց,

Որ երբեք տածել եմ աղջկաս կամ քո նկատմամբ:

Գնա՛, չեմ ուզում չսել ես քո փուշ արդարացումը.

Բայց, եթե կյանքը քաղցր է քեզ համար, չբժի՛ր այստեղից:

Գնում է:

ԱՆԿՆՏԻՆ.—Եվ մի՞թե մահը ավելի լավ չէ կյանքի տանջանքից.

Մեռնել—նշանակում է բաժանվել ինձնից:

Իսկ Սիւլվիան ես եմ: Բաժանվել նրանից

Նշանակում է բաժանվել ինձնից: Մահացո՞ւ աքսոր...

Այն լույսը լույս չէ, եթե չպիտի տեսնեմ Սիւլվիային.

Այն խինդը խինդ չէ, երբ Սիւլվիան չկա,

Մի՞թե հերիք է երևակայել, որ նա կողքիս է

Եվ հագնեալ ինձ կատարելիութեան ստվերով միայն:

Եթե ես դիշերը Սիւլվիայի հետ չեմ,

Սոխակի երգում քաղցրություն չկա.
 Եթե ցերեկը Սիլվիային չտեսնեմ, ինձ ցերեկ չկա:
 Նա իմ էությունն է, և ես չեմ լինի
 Թե մրաս չգգամ նրա մոզական ազդեցությունը,
 Որը ջերմացնում, լուսավորում ու գուրգուրում է ինձ:
 Մահից չեմ փախչի,
 Փախչելն ավելի մահացու մահ է:
 Այստեղ մնալով ես մահվան կսպասեմ,
 Այստեղից փախչելով կյանքից կփախչեմ:

Մտնում են Պրոտեոսը և Լաուեսը:

ՊՐՈՏԵՈՍ.— Վաղիր, վաղիր մանչուկ և դարիր նրան:

ԼԱՈՒՆՍ.— Տե՛ս-տե՛ս...

ՊՐՈՏԵՈՍ.— Ի՞նչ ես տեսնում դու:

ԼԱՈՒՆՍ.— Նրան, որին փնտրում ենք. զլխի յուրաքանչյուր մազը
 պարզ ասում է, որ դա Վալենտինն է:

ՊՐՈՏԵՈՍ.— Դու Վալենտինն ե՞ս:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ո՞վ ես ուրեմն, իր ոգի՞ն:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչ էլ նա:

ՊՐՈՏԵՈՍ.— Ուրեմն ի՞նչ ես:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչինչ:

ԼԱՈՒՆՍ.— Ի՞նչպե՞ս կարող է ոչինչը խոսել: Տե՛ր իմ, հարվածե՛մ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ո՞ւմ հարվածես:

ԼԱՈՒՆՍ.— Ոչնչին:

ՊՐՈՏԵՈՍ.— Զսպիր քեզ, ապուշ:

ԼԱՈՒՆՍ.— Բայց, տե՛ր իմ, ես ոչինչն եմ ուզում հարվածել.
 Խնդրում եմ:

ՊՐՈՏԵՈՍ.— Հիմար, ասում եմ չհամարձակվես: Ընկեր իմ Վա-
 լենտին՝ մի բառ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իմ ականջներն այնպես են խցված տխուր
 խոսքերով,

Որ ուրախ լուրերի համար տեղ չունեն:

ՊՐՈՏԵՈՍ.— Իմ լուրերն, ուրեմն, ես պետք է փաղեմ խոր
 լուռության մեջ,

Որովհետեւ դա՛ռն են, անդո՛ւր են և վա՛տ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սիւլվիան մեռե՞լ է:

ՊՐՈՏԵՈՍ.— Ո՛չ, Վալենտին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Վալենտինը իրոք դոյություն չունի պաշտելի Սիլ-

վիայի համար: Ուրացե՞լ է ինձ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ո՛չ, Վալենտին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Չկա Վալենտին, եթե Սիւլվիան ինձ դավաճանել է:

Ի՞նչ լուրեր ունեք:

ԼԱՌԻՆՍ.— Հայտարարված է, որ դուք տարված եք:

ՊՐՈՏԵՈՍ.— Որ վտարված ես

Դու թե այստեղից և թե Սիւլվիայից,

եվ թե ինձանից, որ քո ընկերն եմ: Այդ են լուրերը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Օ, ես այդ լեզին արդեն խմել եմ,

Մի քիչ ավելին և ես կխեղդվեմ:

Իսկ Սիւլվիան դիտե՞, որ վտարված եմ:

ՊՐՈՏԵՈՍ.— Դատավճիռն այդ,

Որը դեռևս իր ուժի մեջ է,

Նա դիմավորեց մի ծովով հալչող մարդարիտների,

Որոնց ոմանք արցունք են կոշում:

Նա նրանց թափեց իր հոր անողոք ոտքերի վրա,

Նրանց հետ, չորած իր խոնարհ անձը նետեց հոր առաջ,

Գալարելով իր մեղրամոմի պէս սպիտակ ձեռքերը

Վշտից դունատված:

Սակայն ոչ նրա ծալված ծնկները,

Ոչ էլ վեր պարզած անբիծ ձեռները,

Ոչ նրա տխուր ողբերն ու խորունկ հառաչանքները,

Ոչ արծաթահոս իր արցունքները,—

Չկարողացան թափանցել դաժան ծերունու սիրտը:

Թե Վալենտինին բռնելու լինեն՝ կսպանեն անխոս:

Բացի այդ, աղջկա միջնորդությունը,—

Երբ աղերսում էր, որ նա քեզ ների,—

Այն աստիճանի գրգռեց նրան,

Որ հրամայեց աղջկան փակել մի մութ բանտի մեջ,

Խիստ սպառնալով միշտ՝ այնտեղ թողնել:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ոչ մի բառ այլևս, եթե չես ուզում,

Որ հաջորդ բառը շարասիրտ ուժով հարվածե կյանքս:
Եթե այդպես է, ապա խնդրում եմ
Շշնջա դու այդ բառը ականջիս,
Որպես ծայր-սաղմոս իմ անծայր վշտի:

ՊՐՈՏԵՈՍ.— Մի ողբա իզուր,

Եվ սովորիր դու դարման պահել վշտիդ:
Ժամանակն է ամեն բարիքի դայակն ու դաստիարակը:
Թե այստեղ մնաս, չես կարողանա քո սերը տեսնել:
Բացի դրանից, այստեղ մնալդ կյանքդ կկարճե:
Հույսը նեցուկն է սիրահարվածի.

Քայլիր նրա հետ

Եվ գործ դիր նրան ընդդեմ հուսահատ մտածմունքների:

Քո նամակներն այստեղ կլինեն,

Թեպետ և ինքդ այստեղ չես լինի:

Որոնք ինձ վրա ուղղված լինելով

Կդրվեն՝ անդամ սիրածդ աղջկա սպիտակ կրծքին:

Ժամանակ չէ այժմ զուր հառաչելու:

Եկ առաջնորդեմ ես քեզ քաղաքի դարպասի միջով,

Եվ նախքան մնաս բարով ասելը

Մանրամասնորեն քեզ հետ կխոսեմ

Սիրուդ գործերին առնչվող բոլոր հարցերի մասին:

Թե քեզ չես սիրում, ի սեր Սիլվիայի

Զգույշ վտանգից. դե գնա՛նք ինձ հետ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Խնդրում եմ, Լաուրա, եթե կտեսնես իմ

մանկավիհին

Ասա շտապի և հանդիպի ինձ Հյուսիս դռան մոտ:

ՊՐՈՏԵՈՍ.— Դե, գնա, հիմար, և դո՛ւր նրան: Գնանք Վալենտին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Օ, սիրելի Սիլվիա՛ս, դժբախտ Վալենտին...

Վալենտինը և Պրոտեոսը գնում են:

ԼԱՈՒՆՍ.— Տեսե՛ք, ես մի հիմար եմ և ուրիշ ոչինչ. և սակայն
ես այնքան խելք ունեմ հասկանալու, որ իմ տերը մի տեսակ
խաբեբա է, սակայն դա միևնույն է, ինչ որ խակական խաբե-

բան: Ոչ մի կենդանի էակ չգիտե, որ ես սիրահարված եմ, և սակայն ես սիրահարված եմ: Սակայն այդ դադարներիք մի լուծ ձիով անդամ չես քաշի ինձնից, ոչ էլ այն դադարներիք թե ում եմ սիրում: Եվ ապակյա իմ սիրածը կին է, բայց թի՛ն ինչ կին է, ես ինքս էլ չեմ ասի. և սակայն դա մի գեղջկուհի է, և սակայն նա աղջիկ չէ, որովհետեւ նրա մասին շատ են խոսել, և սակայն նա աղջիկ է, որովհետեւ նա իր տիրոջ տանու աղջիկն է և վարձով է աշխատում: Նա ավելի շատ բարեմասնություններ ունի, քան թե որտեղ շունը,—որը շատ է մի պարզ քրիստոնյայի համար:

Հանելով մի քույր:

Ահա նրա բարեմասնությունների ցուցակը: Imprimis*—այսինքն նա կարող է բերել և տանել: Ինչու չէ, ձին ավելին չի կարող անել: Ոչ, ձին չի կարող բերել, բայց կարող է միայն տանել. հետևապես նա մի քստոս ձիուց լավ է: Item**, նա գիտե կրել. ահալտսիկ հրաշալի առաքինություն մի աղջկա մոտ, որի ձեռքերը մաքուր են:

Մտնում է Սպիղը:

ՍՊԻԴ.— Ի՞նչպես ես, սինյոր Լաունս, ի՞նչ նորություններ կան:

Անցա՞վ սիրելի իմ տիրոջ ցավը:

ԼԱՍԻՆՍ.— Իմ տիրոջ նա՞վը: Նա ծովի վրա է:

ՍՊԻԴ.— Դեռ վերջ չես ավել՜ քո հին սովորությանը և շարունակում ես բառախաղ անել: Ի՞նչ նորություններ կան այդ թղթի մեջ:

ԼԱՍԻՆՍ.— Ամենասեւ նորությունը, որ երբեկիցե լսած կամ դու:

ՍՊԻԴ.— Այսինքն ինչպես սե:

ԼԱՍԻՆՍ.— Թանաքի պես սե:

ՍՊԻԴ.— Թող կարդամ:

ԼԱՍԻՆՍ.— Կորիք, ավանակ, դու կարդալ չգիտես:

ՍՊԻԴ.— Դու ստում ես, ես կարդալ գիտեմ:

ԼԱՍԻՆՍ.— Ես քեզ սխալի քննեմ: Ասա ինձ, ո՞վ է քեզ լույս աշխարհ բերել:

*) Imprimis—նախ և առաջ. ամենից առաջ:

**) Item—նաև:

ՍՊԻԴ.— Պարզ է, իմ պապի որդին:

ԼԱՌԻՆՍ.— Օ, դու անգրագետ ապուշ: Քեզ լույս աշխարհ է բերել քո տատիկի որդին: Սա չապացուցում է, որ դու կարդալ չգիտես:

ՍՊԻԴ.— Լսիր, հիմար, դու ինձ քննիր քո թղթի համաձայն:

ԼԱՌԻՆՍ.— Լավ. սուրբ Նիկողայոսը թող քեզ օգնական լինի:

ՍՊԻԴ.— Imprimis— նա գիտե կրել:

ԼԱՌԻՆՍ.— Այո, նա այդ կարող է:

ՍՊԻԴ.— Item, նա հրաշալի գարեջուր է պատրաստում:

ԼԱՌԻՆՍ.— Դրանից է գալիս այս ասածը. «Ողորմի հոգուդ, դու լավ գարեջուր ես պատրաստում»:

ՍՊԻԴ.— Item, նա գիտե կարել:

ԼԱՌԻՆՍ.— Այդ միևնույն է թե ասել «նա կարող է»:

ՍՊԻԴ.— Item, նա գիտե գործել:

ԼԱՌԻՆՍ.— Էլ ի՞նչ է հարկավոր այն մարդուն, որի կինը կարող է իր համար գուլպա գործել:

ՍՊԻԴ.— Item, նա գիտե լվանալ և մերել:

ԼԱՌԻՆՍ.— Հատուկ առաքինություն, որովհետև նա կարիք չի զգա լվացվելու և քերվելու:

ՍՊԻԴ.— Item, նա գիտե մանել:

ԼԱՌԻՆՍ.— Դրանից լավ բան չկա՝ եթե նա իր ապրուստը կարող է մանելով ճարել:

ՍՊԻԴ.— Item, նա շատ ամանուն առաքինություններ ունի:

ԼԱՌԻՆՍ.— Այսինքն ապօրինի առաքինություններ, որոնք անհարգատ զավակների պես իսկապես չեն ճանաչում իրենց հայրերին, հետևապես և անուն չունեն:

ՍՊԻԴ.— Ապա գալիս են նրա թերությունները:

ԼԱՌԻՆՍ.— Իր առաքինություններին կրնակովի:

ՍՊԻԴ.— Item, նրան չպետք է համբուրել քաղցած ժամանակ, նկատի ունենալով՝ նրա բերանի հոտը:

ԼԱՌԻՆՍ.— Այդ թերությունը կարելի է վերացնել նախաճաշով: Շարունակիր:

ՍՊԻԴ.— Item, նա շատակեր է:

ԼԱՌԻՆՍ.— Դա կարող է կարգավորել նրա բերանի թթվահոտը:

ՍՊԻԴ.— Item, նա մեծ խոտում է:

ԼԱՌԻՆՍ.— Դա ոչինչ, միայն թե նա խոտելիս չքնի:

Մի քիչ ժամանակ՝ և նրա սառած սիրտը կհալչի,
եւ անարժան Վալենտինը պիտի մոռացվի:

Այդ դուք եք այստեղ, պարոն Պրոտեոս:

Զեր հայրենակիցը գնա՞ց համաձայն մեր հրամանի:

ՊՐՈՏԵՈՍ.— Գնացել է, տեր իմ:

ԴՈՒՔՍ.— Իմ դուստրը նրա գնալու լուրը վշտով ընդունեց:

ՊՐՈՏԵՈՍ.— Մի քիչ ժամանակ, տեր իմ, այդ վիշտը կսպանի:

ԴՈՒՔՍ.— Ինքս այդպես էլ հավատացած եմ,

Բայց պարոն Տուրիոն այդպես չի կարծում:

Պրոտեոս, այն լավ կարծիքը, որ ես ունեմ ձեր մասին,—

Որովհետեւ դուք ցույց եք տվել ինձ նվիրվածություն,—

Բեկադրում է ինձ ձեզ վստահելու:

ՊՐՈՏԵՈՍ.— Եթե դադարեմ նվիրվածության ապացույց տալ ձեզ,

Թող այդ վարկյանից այլես չապրեմ

եւ չարժանանամ ձեր շնորհին ես:

ԴՈՒՔՍ.— Դուք դիտեք, թե ես ինչքան եմ ուզում

Ամուսնացնելու պարոն Տուրիոյին իմ աղջկա հետ:

ՊՐՈՏԵՈՍ.— Ես դիտեմ, տեր իմ:

ԴՈՒՔՍ.— Եւ նույնպես, կարծեմ, ձեզ տնձանոթ չէ,

Թե ինչպես դուստրն իմ դե՛մ է իմ կամքին:

ՊՐՈՏԵՈՍ.— Նա դեմ էր, տեր իմ, երբ Վալենտինը դեռեա այս-
տեղ էր:

ԴՈՒՔՍ.— Այո, և այժմ էլ համառության մեջ հարատեւում է,

Ի՛նչ միջոցներով ստիպեմ նրան,

Որ Վալենտինի սերը մոռանա

եւ սկսի սիրել պարոն Տուրիոյին:

ՊՐՈՏԵՈՍ.— Միակ միջոցը դա Վալենտինին խայտառակելն է,

Հայտարարելով, որ նա երկչոտ է,

Ծաղումով ստոր և ուխտադրուծ—

Երեք հատկություն, որ կանանց համար խիստ ատելի են:

ԴՈՒՔՍ.— Այո, սակայն իմ դուստրը պիտ կարծի,

Որ դա խոսվում է ատելությունից:

ՊՐՈՏԵՈՍ.— Այո, եթե դա թշնամին ասի:

Դրա համար էլ, այդ մասին նրան

Պետք է զեկույցի այնպիսի մի մարդ,

Ում համարում է նա Վալենտինի մոտիկ ընկերը:

ԴՈՒՔՍ.— Ուրեմն պետք է դուք հանձնն առնեք

Նրան զրպարտել:

ՊՐՈՏԵՈՍ.— Ես դժկամակ եմ այդ բանին, տեր իմ, դա ստոր
գործ է

Եվ անվայել մի ազնվականի,

Մանավանդ իր իսկ բարեկամի դեմ:

ԴՈՒՔՍ.— Եթե ձեր գովեստը նրան չի օգնի,

Ձեր զրպարտանքը երբեք չի կարող նրան վնասել:

Ուստի այդ գործը ձեզ համար նույն է,

Մանավանդ երբ ձեր ընկերն է խնդրում:

ՊՐՈՏԵՈՍ.— Դուք ինձ հաղթեցիք:

Թե կարողանամ այդ անել, տեր իմ,

Որեւէ խոսքով, որ ես կարող եմ

Իբրեւ զրպարտանք ուղղել նրա դեմ,

Աղջիկն այլեւս նրան չի սիրի:

Սակայն աղջկա սրտից պոկելով

Դեպի Վալենտինն ունեցած սերը,

Ձի նշանակում, որ նա կսկսի Տուրիոյին սիրել:

ՏՈՒՐԻՈ.— Ուստի, երբ քանդեք աղջկա սերը

Նրա վրայից,

Քանի այդ սերը դեռ չի խճճվել և անպետքացել,

Աշխատեցեք իմ շուրջը փաթաթել,

Որը պիտ արվի ինձ շատ գովելով

Եվ Վալենտինին վարկաբեկելով:

ԴՈՒՔՍ.— Եվ այսպես, Պրոտեսոս,

Մենք վստահում ենք ձեզ այս գործի մեջ,

Որովհետեւ դուք,— մեզ Վալենտինն է ասել այդ մասին,—

Արդեն հաստատուն սիրո ուխտ ունեք մի այլ աղջկա հետ

Եվ անկարող եք այդքան շուտ դրժել սիրած աղջկան:

Այս երաշխիքով կթույլատրվի

Ձեզ մուտք գործելու իմ Սիլվիայի մոտ,

Եվ ազատորեն խոսելու իր հետ:

Նա վշտացած է, տխուր և թախծոտ,

Բայց ձեր ընկերոջ սիրո համար նա

Ուրախ կլինի ձեզ հանդիպելու,

Որտեղ կարող եք ձեր հորդորներով համոզել նրան

Վալենտինին ատել և սիրել սկսել իմ բարեկամին:
ՊՐՈՏԵՆՈՍ.— Կաշխատեմ, ինչքան ուժերս կապտեն:
 Բայց դուք, պարոն Տուրիո, շատ քիչ եք ճարպիկ:
 Ջեզ հարկավոր է պարարտացնել իր ցանկությունները
 Ողբալի սիրո վառ սոնետներով, որոնց հանգերը
 Լիաձայն հնչեն հավատարմության ջերմ խոստումներով:
ԴՈՒՔՍ.— Այո, մե՛ծ է ուժը երկնքից ծնված բանաստեղծության:
ՊՐՈՏԵՆՈՍ.— Ասացեք, որ դուք իր գեղեցկության խորանի վրա
 Զոհաբերում եք ձեր արցունքները,
 Հառաչանքները և սիրող սիրտը:
 Գրեցեք մինչև թանաքը չորանա,
 Ձեր արցունքներով թրջեք այն նորից
 Եվ հարմարեցրեք զգայուն տողեր,
 Որ ցույց տան նրան ձեր անկեղծ սերը.
 Քանզի Օրֆեյի. Կիֆիառի լարերը
 Բանաստեղծների նյարդներն էին,
 Որի ոսկեղեն հպումը միայն
 Կարող էր փափկացնել պողպատն ու քարը,
 Վագրերին զսպել և ստիպել մեծ
 Լեվիաթաններին դուրս գալ ալրերից
 Եվ ալազների վրա պար բռնել:
 Ձեր այդ ողբաձայն հղերգից հետո
 Գիշերով գնացեք և կանգնեցեք ձեր
 Սիրած աղջկա պատուհանի տակ նվազախմբով.
 Նրանք թող նվազեն, իսկ դուք երգեք մի տխուր մեղեդի
 Եվ գիշերային քար լռություներ կներդաշնակվի
 Նման քաղցրաձայն թախծոտ երգի հետ:
 Միայն ա՛յս՝ ձևով կտիրե՞ք նրան:

ԴՈՒՔՍ.— Այս հրահանգը պարզ ցույց է տալիս, որ դուք սիրե՞լ
 եք:

ՏՈՒՐԻՈ.— Քո այդ խորհուրդը ես այս գիշերը գործի կդնեմ:
 Հետևապես և, քաղցրիկ Պրոտեոս, դու իմ առաջնորդ,
 Եկ քաղաք գնանք մենք անմիջապես
 Մի քանի ընտիր նվագողների ջոկելու համար:
 Մի սոնետ ունեմ, որը կարող է
 Լրիվ ծառայել այդ նպատակին,

Որպէս նախերգանք ձեր լավ խորհրդին:
ԴՈՒՔՍ.— Դեպի գործ, պարոններ:
ՊՐՈՏԵՍՏ.— Շնորհակալլ տեր իմ, թե հաճելի է,
Մենք ձեզ կսպասենք ընթրիքից հետո
Եվ ապա կորոշենք մեր անելիքը:
ԴՈՒՔՍ.— Ո՛հ, ոչ հենց այժմ,
Ես թույլ եմ տալիս:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԶՈՐՐՈՐԴ

Տեսարան առաջին. — Մի անտառ Միլանի և Վերոնայի մեջտեղ:

Մտնում են մի ֆանի ավազակներ:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶԱԿ. — Տղերք պատրաստ կանգնեք, ես անցորդ եմ
տեսնում:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶԱԿ. — Եթե տասն էլ լինեն՝ ետ չկանգնել կովից,
Այլ՝ դրոհել նրանց վրա:

Մտնում են Վալենտինը և Սպիրը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶԱԿ. — Ո՛վ էք, կանգնեք պարոն, ինչ որ ունես
տուր մեզ,

Թե չէ կբռնենք և ուժով կառնենք:

ՍՊԻՐ. — Մենք կորած ենք, պարոն. սրանք այն սրիկաններն են,
որոնցից բոլոր ճամփորդներն են դողում:

ՎԱԼԵՆՏԻՆ. — Իմ բարեկամներ...

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶԱԿ. — Այդպես չէ, պարոն, մենք ձեր թշնամին
ենք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ. — Լռի՛ր, մենք պետք է լսենք նրան:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶԱԿ. — Մորուքովս եմ հրդրում՝ նրան պետք է
լսենք, որովհետև նա վայելուչ մարդ է:

ՎԱԼԵՆՏԻՆ. — Իմացե՛ք ուրեմն, ես քիչ բան ունեմ՝ կորցնելու

համար:

Ես դաժան բախտով զարկված մի մարդ եմ,

Իմ ամբողջ գանձը այս խեղճ հանդերձն է,

Որից եթե դուք այժմ ինձ զրկեք՝

Ուրեմն կվերցնեք իմ ամբողջ գանձը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Ո՛ւր եք գնում:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դեպի Վերոնա:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Ո՞րտեղից եք գալիս:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Միլանից:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Այնտեղ երկա՞ր եղաք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Մոտավորապե՛ս տասնվեց ամիս:

Ավելի երկար կարող էի մնալ,

եթե չար բախտը չհալածեր ինձ:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Ի՞նչ է, չլինի՞ արտաքսված եք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Արտաքսված եմ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Ի՞նչ մեղքի համար:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Մի մեղքի համար, որ տանջալից է այժմ ինձ
պատմել:

Ես սպանեցի մի մարդ, ում մահը սաստիկ զղջում եմ:

Ես սպանեցի նրան կովի մեջ, ճակատ առ ճակատ,

Առանց քողարկված առավելության

եվ կամ թե ստոր դիտավորություն:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Եթե դա ճիշտ է, չարժե երբեք զղջալ:

Եվ արքայից եք դուք նման չնչին հանցանքի համա՞ր:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այո, և դո՛հ եմ, որ դատաստանը թեթև վերջացա՛վ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Լեզունքի գիտե՞ք:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իմ լեզունքի գիտություն համար

ես պարտական եմ պատանեկական թափառումներին,

Այլապես հաճախ ես ինձ կղղայի թշվառ վիճակում:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Երգվում եմ Ռոբին Հուդի գեր արեղայի լերկ
զանգով,

Որ այս տղան ըավ պետ կլինեք

Մեր կատաղի խմբին:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Մենք կվերցնենք նրան: Պարոններ, մի՛ բառ:

ՍՊԻԴ.— Միացեք նրանց, տե՛ր իմ,

Նրանք պատվավոր տեսակն են դողերի:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Լո՛ի՛ր, ավանակ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Մեզ այն ասացեք՝ ի՞նչ եք մտադիր դուք
ձեռնարկելու:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Իմ բախտից բացի ուրիշ ոչ մի բան:
ԵՐՐՈՐԴ ԱՎԱԶ.— Իմացիր ուրեմն, ոմանք մեզանից ազնվական
են,

Որոնց մոլեգին և անզուապ դարձած ջահելությունը
Դուրս վանեց պարկեշտ մարդկանց շրջանից:
Ես Վերոնայից արտաքսվեցի
Նրա համար, որ փորձեցի ես մի տիկին փախցնել,
Մի ժառանգուհուն՝ դուքսին շատ մոտիկ մի ազնվականի:
ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Իսկ ես Մանտուայից եմ, մի ազնվականի
համար աքսորված,

Որին հաշտւոյնով սրտից խոցեցի բարկության ժամին:
ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Ես էլ այգալիսի շնչին մեղքերի համար եմ
քշվել:

Բայց գործին դառնանք. մեր հանցանքները մեջտեղ կոչեցինք,
Որպեսզի նրանցով արդարացնենք մեր անօրէն կյանքը.
Մասամբ տեսնելով, որ դուք զուգված եք լավ արտաքինով
եւ ձեր սեփական խոստովանությամբ մի լեզվագետ եք
եւ մի այգալիսի կատարյալ մարդ եք,
Որի կարիքը մենք խիստ զգում ենք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Իրոք, քանի որ աքսորական եք,—

Ուստի պատրաստ ենք ձեզ հետ բանակցել:

Ուզում եք դուք մեզ զորապետ լինել,

Կարիքը դարձնել առաքինություն

Եւ ապրել մեզ պես այս անապատում:

ԵՐՐՈՐԴ ԱՎԱԶ.— Հը, ի՞նչ կասես դու: Ուզո՞ւմ ես դու մեր
խմբին միանալ:

Ասա «ուզում եմ» և առաջնորդը դարձիր բոլորիս:

Մեզ ղեկավարիր, քեզ հնազանդ կլինենք

Եւ քեզ կսիրենք որպես մեր իշխան և մեր թագավոր:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Բայց եթե դու մեր խնդիրն անարգես,

Դու պիտի մեռնես:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Եւ չես ապրելու, որ պարծենաս մեր առաջարկությամբ:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ես ընդունում եմ ձեր առաջարկը և կապրեմ ձեզ
հետ,

Եթե ձեռք չտաք խեղճ անցորդներին և անզոր կանանց:

ԵՐՐՈՐԴ ԱՎԱԶ.— Ոչ, մենք դարշում ենք այդպիսի անարգ,
Ստոր արարքից:

Եկ գնանք մեզ հետ, մենք քեզ կտանենք մեր խմբերի մոտ
Եվ ցույց կտանք քեզ մեր շամբողջ գանձը,
Որ մեզ հետ լրիվ գտնվում է քո հրամանի տակ:

Գնում են:

Տեսարան երկրորդ.— Միլան. դուքսի պալատի դավիթը:

Մտնում է Պրոտեսուր:

ՊՐՈՏԵՍՈՍ.— Վալենտինի դեմ արդեն դավեցի,

Եվ այժմ պետք է Տուրիոյի հանդեպ նույն ձևով վարվեմ:

Նրան գովելու պատրվակի տակ

Ես իմ սիրո գործն առաջ եմ մղում:

Եվ սակայն Սիլվիան շատ է գեղեցիկ,

Նա շատ է անկեղծ, շատ է անարատ,

Որ գալթակղեցնեմ նրան անարժան իմ նվերներով:

Երբ իր նկատմամբ ես իմ ճշմարիտ

Հավատարմության մասին եմ խոսում՝

Նա շարտում է իմ հրեսին, որ

Ես իմ ընկերոջ հանդեպ խարդախ եմ:

Երբ գովում եմ իր գեղեցկությունը իմ երգումներով,

Նա հիշեցնում է, որ ես դրժեղ եմ

Հավատարմության ուխտն իմ խախտելով Զուլիայի հանդեպ:

Որին սիրել եմ:

Եվ չնայելով նրա այդ բոլոր դառն հեղինակներին,—

Որոնց նշույլը ի վիճակի է

Տապալել հույսը սիրահարի մեջ,—

Որքան նա իմ սերն արհամարհում է՝

Այնքան իմ սերը, քերձե շան նման,

Հզորանում է և փարվում նրան:

Բայց ահավասիկ Տուրիոն է գալիս: Այժմ մենք պետք է

Գնանք Սիլվիայի լուսամուտի տակ

Եվ երկոյան նվազով նրա ականջը շոյենք:

ՏՈՒՐԻՈ.— Հը, պարոն Պրոսկոս:

Դուք սողացել եք մեզանից առաջ:

ՊՐՈՏԵՈՍ.— Այո, ազնիվ Տուրիո, քանզի դու գիտես

Սերը այնպիսի ատելեր է սողում,

Որտեղ չի կարող քայլելով գնալ:

ՏՈՒՐԻՈ.— Այո... բայց ինչքան ես գիտեմ, պարոն,

Ձեր սերն այստեղ չէ:

ՊՐՈՏԵՈՍ.— Այստեղ է, պարոն. եթե ջիներ՝ ես կգնայի:

ՏՈՒՐԻՈ.— Ո՞վ, Սիլվիա՞ն:

ՊՐՈՏԵՈՍ.— Այո Սիլվիան է, ձեր խաթեր համար...

ՏՈՒՐԻՈ.— Շնորհակալ եմ, ձեր խաթեր համար: Այժմ պարոններ,

Մեր գործիքները եկեք քիչ լարենք

եվ խիզախորեն գործի անցնենք:

Խորհից մտնում են պանդոկապետը և
Զուլիան՝ տղայի հանդերձով:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Իմ պատանի հյուր, ինձ թվում է, որ դուք մե-
լամաղձոտ եք. ես խնդրում եմ ասեք պատճառը:

ԶՈՒԼԻԱ.— Դա նրանից է, իմ պանդոկապետ,

Որ անկարող եմ ես ուրախ լինել:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Եկեք գնանք. մենք ձեզ կուրախացնենք: Ես ձեզ
կտանեմ այնտեղ, ուր դուք նվագ կլսեք և կտեսնեք այն պա-
րոնին, որի մասին հարցրիք:

ԶՈՒԼԻԱ.— Բայց պիտի լսե՞մ ես նրա ձայնը:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Այո, իհարկե:

ԶՈՒԼԻԱ.— Դա նվագ կլինի:

Երաժիշտները նվագում են:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Լսեցե՞ք, լսեցե՞ք:

ԶՈՒԼԻԱ.— Նա սրանց մե՞ջ է:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Այո, բայց լռություն, եկեք լսենք նրանց:

Ո՛վ է Սիլվիան, ի՞նչ է նա,
 Որ մեր բոլոր հովիվները գովում են,
 Լուսեղեն է, գեղեցիկ է, անմամն.
 Շնորհե՛լ է երկինք նրան ամեն բան,
 Որ ամեն մարդ նրա տեսնով հիանա:
 Բարի՞ է նա այնքան որքան սիրուն է,
 Գեղեցիկն ու բարին ապրում են մեկտեղ,—
 Սերը նրա աչքերի մեջ փնտռում է
 Իր կուրուքունը դարմանող նար ու դեղ.
 Եվ գտնելով նա այնտեղ էլ ապրում է:
 Արդ, Սիլվիային երգով գովենք մենք հիմա.
 Ասենք Սիլվիան կատարյալ է և անմահ.
 Եվ այս տխուր երկրի վրա հավիտյան
 Ջկա իր պես գեղեցիկ ու անմամն,
 Ծաղկեփնջեր եկե՛ք բերենք մենք նրան:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Դուք առաջվանից ավելի տխուր եք երևում:

Ի՞նչ է պատահել ձեզ բարեկամ: Նվազը ձեզ դուր չի՞ գալիս:

ՋՈՒԼԻԱ.— Դուք սխալվում եք, նվազողը ինձ դուր չի գալիս:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Իսկ ինչո՞ւ համար, իմ գեղեցիկ պատանի:

ՋՈՒԼԻԱ.— Նա կեղծ է նվազում:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Ի՞նչպես, լարե՞րն են կեղծ հնչում:

ՋՈՒԼԻԱ.— Ոչ, բայց նա այնքան կեղծ է նվազում,

Որ ցավեցնում է սրտիս լարերը:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Դուք շատ դժայուն ականջ ունեք:

ՋՈՒԼԻԱ.— Կուղեի խուլ լինել,

Դա սիրտս ճմլում է:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Ես նկատում եմ, որ դուք երաժշտություն չեք սիրում:

ՋՈՒԼԻԱ.— Օ՛, ամենևին, երբ որ ‘ա այդքան աններդաշնակ է:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Ուշադրություն, ինչ գեղեցիկ փոփոխակ նվագի մեջ:

ՋՈՒԼԻԱ.— Դժբախտությունն էլ այդ փոփոխման մեջ է:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Դուք կուղենայիք, որ նրանք միշտ միևնույն եղանակը նվագե՞ն:

ՋՈՒԼԻԱ.— Ես կուղեի, որ մեկը միշտ նո՛ւյն եղանակը նվագեր:

Սակայն, պարոն Պրոտեոսը,
 Որի մասին մենք ձեզ հետ խոսեցինք,
 Հաճախ է լինում այդ օրիորդի մոտ:
ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Ես ձեզ կասեմ այն, ինչ որ կառնար— նրա
 սպասավորը ինձ պատմեց: Նա նրան շափից դուրս է սիրում:
ՋՈԻԼԻԱ.— Ո՛ր է կառնար:
ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Գնացել է փնտրելու իր շանը, որին նա վաղը իր
 տիրոջ հրամանով պետք է նվիրի նրա օրիորդին:
ՋՈԻԼԻԱ.— Լռությո՜ւն. մի կողմ կանգնեցեք, խոսքը բաժանվում
 է:
ՊՐՈՏԵՈՍ.— Դուք, պարոն Տուրիո, հանգիստ մնացեք
 Այնպես պաշտպանեմ,
 Որ ինքներդ հիանաք իմ վարպետությունը:
ՏՈՒՐԻՈ.— Որտե՞ղ հանդիպենք:
ՊՐՈՏԵՈՍ.— Սուրբ Գրիգորի ջրհորի մոտ:
ՏՈՒՐԻՈ.— Դե, մնաս բարով:

Տուրիոն և Էրաժիշտները գնում են:

Երևում է Սիլվիան իր լուսամուտի մոտ:

ՊՐՈՏԵՈՍ.— Բարի երեկո, շնորհափայլ օրիորդ:
ՍԻԼՎԻԱ.— Շնորհակալ եմ ձեր նվազի համար, պարոններ:
 Ո՛վ է ինձ հետ խոսում:
ՊՐՈՏԵՈՍ.— Մեկը, որին դուք,
 Կարող եք իսկույն ձայնից ճանաչել,
 Թե ծանոթ լինե՞ր ձեզ նրա սրտի անկեղծությունը:
ՍԻԼՎԻԱ.— Թե չեմ սխալվում, պարոն Պրոտեոսն է:
ՊՐՈՏԵՈՍ.— Պարոն Պրոտեոսն է, ազնիվ օրիորդ, և ձեր խոնարհ
 ծառան:
ՍԻԼՎԻԱ.— Ի՞նչ է ձեր կամքը:
ՊՐՈՏԵՈՍ.— Կատարել ձերը:
ՍԻԼՎԻԱ.— Թող այդպես լինի. ես կամենում եմ,
 Որ դուք հենց հիմա շտապեք ձեր տուն քնելու համար:
 Օ, դու խորամանկ ու երգմնազանց,
 Անհավատարիմ և կեղծավոր մարդ,
 Մե՞թե կարծում ես՝ այնքան թեթև եմ և այնքան անմիտ,

Որ հրապուրվեմքն սուտ խոսքերով,
Ար շատերիս են խաբել երդումով:
Դարձիր, տուն դարձիր և նսրում խնդրիր դու քո սիրածից,
Իմ սասին կասեմ, զկա այս գիշերվա դալուկ թագուհին,
Որ ես հեռու եմ քո աղաչանքին ինձ ենթարկելու,
Որ ես խորշում եմ քեզանից խարդախ պահանջիդ համար
Եվ կշտամբում ինձ,

Որ անգամ ես այս բոպեն եմ վատնում քեզ հետ խոսելով:
ՊՐՈՏՆՈՍ.— Ս, դու իմ քաղցր սեր,

Ընդունում եմ, որ ես մի աղջկա իրոք սիրել եմ,
Բայց նա մեռած է...

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Խե ես խոսելի քո ողջ կեղծիքը կմերկացնեի,
Քանզի վատահ եմ նա դեռ թաղված չէ:

ՍԻՎԻԻԱ.— Ասենք մեռած է. բայց վալենտինը՝ քո բարեկամը,
Նա դեռ ապրում է և դու լավ դիտես,
Որ նրա հետ արդեն ես նշանված եմ:
Եվ չե՞ս ամաշում վշտացնել նրան,
Ինձ ձանձրացնելով քո պահանջներով:

ՊՐՈՏՆՈՍ.— Եվ ես լսել եմ, որ վալենտինը նույնպես մեռած է:

ՍԻՎԻԻԱ.— Ենթադրիր նույնպես, որ ես էլ չկամ, որովհետև իմ
Սերը թաղված է իր գերեզմանում, համոզված եղիր:

ՊՐՈՏՆՈՍ.— Հրաշալի օրիորդ, թույլ տվեք հանեմ

Ձեր սերն այնտեղից:

ՍԻՎԻԻԱ.— Դնա քո սիրած աղջկա շիրիմ,

Դուրս կոչիր նրա սերը այնտեղից,

Կամ գոնե սերդ թաղիր դու նրա գերեզմանի մեջ:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Նա չսեց այդ:

ՊՐՈՏՆՈՍ.— Եթե ձեր սիրտը այնքան անզույթ է,

Շնորհեք գոնե ձեր պատկերը ինձ իմ սիրո համար,—

Ձեր սենյակի մեջ կախված պատկերը:

Նրան կդիմեմ ես իմ խոսքերով,

Նրա առաջ ես արցունք կթափեմ ու կհառաչեմ,

Քանզի քանի դեռ այդ հրաշակերտ էությունը ձեր

Ուրիշին է նվիրված,

Ուրեմն ինքս միայն ստվեր եմ

Եվ ձեր ստվերը հավատարմությամբ ես պիտի սիրեմ:

ՋՈՒԼԻԱ.— (Մեկուսի) Թե նա մարմնավոր արարած լիներ,

Դու անշուշտ նրան էլ պիտի խաբերիր

եվ պիտ դարձնեիր ինձ նման ստվեր:

ՍԻԼՎԻԱ.— Ես չեմ ցանկանում ձեր կուռքը լինել,

Սակայն քանի որ կեղծիքը, պարոն, ձեզ լավ օգնում է

Ստվերներ պաշտել և երկրպագել անմարմին ձևեր,

Մարդ ուղարկեցեք ինձ մոտ առավոտ

եվ իմ պատկերը ես կուղարկեմ ձեզ:

Այժմ հանգիստ քուն:

ՊՐՈՏԵՍՏ.— Վաղ լուսաբացին գլխատման սպասող թշվառներ
պես:

Պրոտեստը և Սիլվիան գնում են:

ՋՈՒԼԻԱ.— Չգնա՞նք, պանդոկապետ:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Գրողը տանի ինձ, խորն էի քնած:

ՋՈՒԼԻԱ.— Ասացեք խնդրեմ, որտեղ է պարոն Պրոտեստն ապ-
րում:

ՊԱՆԴՈԿԱՊԵՏ.— Պարզ է՝ իմ տանը: Հավատացեք ինձ.

Կարծում եմ օրը արդեն լուսացավ:

ՋՈՒԼԻԱ.— Դեռ չի լուսացել. բայց սա ամենից երկար գիշերն է,
Որ երբեկից ես լուսացրել եմ, և ամենից ծանր:

Գնում են:

Տեսարան երրորդ.— Նույն վայրը:

Մտնում է էզլամուրը:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Սա այն ժամն է, երբ օրիորդ Սիլվիան

խնդրեց գալ իր մոտ իմանալու իր մտադրությունը.

Ինչ որ կարևոր մի գործ ունի ինձ հանձնարարելու

Օրիորդ, օրիորդ:

Սիլվիան գալիս է պատուհանի մոտ:

ՍԻԼՎԻԱ.— Ո՞վ է ինձ կանչում:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Ձեր սպասավորն ու բարեկամը,

Որը պատրաստ է ձեր հրամանին:

ՍԻԼՎԻԱ.— Հազար բարի լույս, պարոն էգլամուր:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Նույն չափ ձեզ լինի, պատվարժան օրիորդ:

Ըստ օրիորդական ձեր կարգադրության,

Այսպես վաղ եկա իմանալու թե

Ի՞նչ եք բարեհաճում ինձ հրամայել:

ՍԻԼՎԻԱ.— Օ, դու, էգլամուր, ազնվական ես,

Չկարծես թե ես շողոքորթում եմ,—

Երգվում եմ, որ ոչ,—

Դու քաջ, իմաստուն, սրտով կարեկից և կատարյալ ես:

Դու անշուշտ գիտես, թե ինչպիսի խոր սիրով եմ լցված

Դեպի աքսորված Վալենտինը ես.

Թեպետ իմ հայրը ստիպում է ինձ ամուսնանալու

Փուշ Տուրիոյի հետ, որից ես ամբողջ հոգով դարձում եմ:

Ինքդ սիրել ես. և ես լսել եմ, որ դու ասել ես,

Թե ոչ մի կսկիծ սիրտդ չի խոցել այնպիսի ցավով,

Որքան չոր նիրած աղջկա մահը,

Ում շիրիմի վրա երդում տվիր սուրբ ողջախոհության:

Պարոն էգլամուր, ուզում եմ գնալ ես դեպի Մանտուա,

Վալենտինի մոտ, ուր, ըստ պատմածի, բնակվում է նա:

Եվ որովհետև ճանապարհները

Անցնելու համար վտանգավոր են,

Դրա համար էլ կփափագեի

Քո արժանավոր ընկերությունը,

Որի պատվին ու ազնվությանը ես վստահում եմ:

Էգլամուր, իմ հոր ղայրույթը թող քեզ չսարսափեցնե:

Մտածիր դու իմ կսկիծի մասին, աղջկա կսկիծի,

Եվ իմ այստեղից փախչելու արդար արարքի մասին,

Որ կփրկե ինձ մի ամենապիղծ ամուսնությունից,

Որին երկինքն ու բախտը աղետով պիտի հատուցեն:

Ազաշում եմ քեզ իմ սրտի խորքից,—

Որը այնպես է լցված վշտերով

Ինչպես, որ ծովն է ավազով լցված,—

Ինձ ընկերանալ և ինձ հետ գնալ:

Եթե չես ուզում՝ ոչ ոքի չասես ինչ որ ասացի,

Որպեսզի փորձեմ մենակ հեռանալ:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Օրիորդ, ես սաստիկ կարեկցում եմ ձեզ ձեր
վշտերի մեջ,
Որն, ինչքան դիտեմ, առաքինությամբ են հիմնավորված:
Ես համաձայն եմ ձեզ հետ գնալու,
Նույնքան անհոգ եմ, Մե ինչ կարող է ինձ հետ պատահել,
Որքան ցանկացող, որ դուք լիովի երջանիկ լինեք:
Ե՛րբ եք մեկնելու:

ՍԻԼՎԻԱ.— Այսօր երեկո:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Ո՛րտեղ տեսնեմ ձեզ:

ՍԻԼՎԻԱ.— Սուրբ հայր Պատրիկի մենարանի մոտ,
Ուր մտադիր եմ գնալու մի սուրբ խոստովանության:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Կգամ ճիշտ ժամին,

Բարով բացվի վաղը, ազնիվ տիրուհի:

ՍԻԼՎԻԱ.— Բարով բացվի վաղը, ազնիվ էգլամուր:

Գնում են:

Տեսարան չորրորդ.— Նույն վայրը:

Մտնում է Կառնաք իր շան հետ:

ԼԱՌԻՆՍ.— Երբ մարդու ծառան իր հետ շնավարի է վարվում,
տեսնո՞ւմ եք, գործն էլ սկսում է ձախ գնալ: Մի շուն, որին ես
մեծացրել եմ այն օրվանից, երբ նա մի կույր լակոտ էր: Մի
շուն, որին ես փրկել եմ խեղդվելուց, որին զոհ գնացին նրա
երեք թե չորս եղբայրներն ու քույրերը: Ես նրան այնպես եմ
կրթել, որ տեսնողը ճշգրտությամբ կասեր «Այսպես կուզենայի
ես իմ շանը կրթել»: Ինձ հանձնարարված էր նրան տանել և
իմ տիրոջ կողմից նվիրել օրիորդ Սիլվիային: Հենց որ ճաշա-
սենյակ մտա շունը ցատկում է դեպի նրա պնակը և գողանում
է նրա տապակած աքաղաղի ոտքը: Օ, հիմար բան է, երբ շու-
նը չի կարող իրեն պահել բոլոր տեսակի հասարակությունների
մեջ: Ես կուզենայի ունենալ, ինչպես ասում են, այնպիսի մի
շուն, որ իրեն բուռ հավաքեր և դառնար օրինավոր, լիներ ա-
մեն կողմից կատարյալ: Եթե ես նրանից ավելի խելոք չլինեի
և նրա գործած հանցանքն ինձ վրա չվերցնեի, հաստատապես
կարծում եմ, որ նրան դրա համար կկախեին: Ստույգ, ինչպես

ապրում էմ, նա դրա համար իր պատիժը կկրեր: Ինքներդ դատեք. նա իրեն շարտեց երեք թե չորս ազնվացեղ շների խմբի մեջ դուքսի սեղանի տակ: Նա հագիվ էր, — ներեցեք իմ արտահայտությունը, — մի քիչ միզել, երբ հոտը բռնեց ամբողջ սենյակը: «Վտարել շանը» կանչում է մեկը, «Ինչ անպիտան շուն է» գոռում է մյուսը. «Մտրակով դուրս քշել» ասում է երրորդը. «Կախել նրան» ասում է դուքսը: Ես նախապես հոտն առնելով և գլխի ընկնելով, որ դա խեղդեափն է արել, գնացի այն մարդու մոտ, որը ծեծում է հանցավոր շներին. «Բարեկամ, — ասում եմ, — դու հավանորեն ուզում ես մտրակով ծեծել այս շանը»: «Պարզ բան է, ուզում եմ», — ասում է նա. «Դուք ավելի անարդար կլինեք նրա նկատմամբ, — ասում եմ ես, որովհետեւ ե՛ս արեցի այդ բանը»: Նա այլևս չխոսեց և մտրակով ինձ դուրս քշեց սենյակից: Ո՞ր տերը կհամաձայնվեր այսպես վարվել իր շան հետ: Ոչ, երգվում եմ, որ ես ոտնակոճղի մեջ նստեցի* իր գողացած կարկանդակների համար, այլապես նրա գլուխը վաղուց Վոցրած կլինեին: Ինձ խայտառակության սյունին գամեցին նրա խեղդած սաղեբի համար, այլապես դա նրա վրա շատ թանկ կնստեր. սրա համար դու չես մտածում այժմ: Բայց ես հիշում եմ այն խաղը, որ դու բերեցիր գլխիս, երբ ես դուրս եկա օրիորդ Սիլվիայի մոտից: Մի՞թե ես չհրամայեցի քեզ ինձնից աչք չհեռացնել և անել այն, ինչ ես եմ անելու: Ե՞րբ ես տեսել, որ ես ոտքս բարձրացնեմ և թրջեմ ազնվականուհու շրջազգեստը... Տեսե՞լ ես դու երբևիցե, որ ես նման խաղ խաղամ:

Մտնում են Պրոտեոսը և Ջուլիան:

ՊՐՈՏԵՈՍ.— Սեքսստիա՞ն է անունդ: Դու ինձ դուր ես գալիս և ես քեզ իսկույն մի գործ պիտի տամ:

ՋՈՒԼԻԱ.— Ինչ որ կամենաք. կանեմ ինչքան իմ ուժը պատում է:

ՊՐՈՏԵՈՍ.— Հույս ունե՞մ կանես: Էյ, դու փուչ ուամիկ.

Որտե՞ղ ես կորել այս երկու օրը:

ՋՈՒԼԻԱ.— Պարոն, ես ձեր հանձնարարությունամբ շունը օրիորդ Սիլվիային տարա:

*) Պատժի մի տեսակ — փալախկա:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Իսկ ի՞նչ ասաց այդ գոհարիւս մասին:

ԼԱՌԻՆՍ.— Ասաց, որ ձեր շունը խառնածին է, և նման նվերի:

դիմաց շան մկճմրթոց է հարմար շնորհակալության փոխարեն:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Բայց նա ընդունե՞ց շունը:

ԼԱՌԻՆՍ.— Ոչ, չընդունեց, իսկապէս: Ահա վասիլի յետ նրան ետ եմ բերել նորից:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ի՞նչ, իմ անունից դու նրան այս շունն ես առաջարկե՞լ:

ԼԱՌԻՆՍ.— Այո պարոն: Մյուս Սկյուռին դահճի տղաները գողացան ինձանից շուկայում, ուստի ես նրան առաջարկեցի իմ սեփական շունը, մի շուն, որ իր մեծությամբ հավասար է ձեր տաս շանը, հետևապէս ավելի մեծ պարգև է, քան թե ձեր շունը:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Զբոյ՛ր այստեղից և գտիր շունս.

Թե չէ այլևս աչքիս չերևաս:

Գնա, ասում եմ, կանգնում ես, որ ինձ զայրացնե՞ս այստեղ, Ստրուկ, ուզում ես ինձ խայտառակե՞լ:

Լաուսը գնում է:

Սեբաստիան, ես քեզ վարձում եմ ինձ մոտ:

Մասամբ, որ ինքս կարիք եմ զգում քեզ պես պատանու,

Որ կարողանա գաղտնապահ լինել

Եվ ուշիմ լինել իմ հանձնած գործին,

Քանզի վստահել այս խեղկատակին այլևս չեմ կարող.—

Իսկ գլխավորը՝ քո դեմքն ու վարքը ինձ դուր են գալիս,

Որք,— եթե ես չեմ սխալվում իմ գուշակության մեջ,—

Վկայում է լավ դաստիարակություն,

Ուղղամտություն և աղնվութուն:

Ուստի իմացիր սրա համար եմ քեզ վերցնում ինձ մոտ:

Գնա հենց հիմա, այս մատանին էլ դու վերցրու քեզ հետ

Եվ իմ կողմից տուր օրիորդ Սիլվիային:

Նա, ով տվել է ինձ այս մատանին, ինձ շատ էր սիրում:

ԶՈՒԼԻԱ.— Երևում է, դուք նրան չեք սիրել,

Որ բաժանվում եք նրա նվերից:

Գուցե մեռե՞լ է:

ՊՐՈՏԵՆՍ.— Ոչ, ես կարծում եմ՝ նա դեռ ապրում է:
ՋՈՒԼԻԱ.— Ավա՛ղ...

ՊՐՈՏԵՆՍ.— Ինչո՞ւ համար ես դու «ավաղ» գոչում:

ՋՈՒԼԻԱ.— Ձեմ կարող զսպել կարեկցությունս:

ՊՐՈՏԵՆՍ.— Իսկ ինչո՞ւ համար:

ՋՈՒԼԻԱ.— Որովհետեւ ինձ թվում է, թե նա

Ձեզ այնպիսի խոր սիրով է սիրել,

Ինչպես դուք եք ձեր Սիլվիային սիրում:

Նա երազում է նրան, ով իրա սերը մոռացավ,

Իսկ դուք գծվում եք ուրիշի համար— որ ձեզ չի սիրում:

Ինչպիսի կսկիծ, երբ սերը այսքան հակասական է,

Երբ մտածում եմ այդ մասին վշտից «ավաղ» եմ կանչում:

ՊՐՈՏԵՆՍ.— Լավ: Հանձնիր նրան դու այս մատանին

Եվ դրա հետ էլ այս նամակը տուր.

Ահա՛ իր սենյակը: Ասա օրիորդիս,

Որ իր երկնային պատկերն եմ ուզում, որ ինձ խոստացավ:

Երբ քո պատգամը կավարտես, շտապ իմ սենյակն արի:

Ուր ինձ կգտնես տխո՛ւր և մենա՛կ:

Գեռւմ է:

ՋՈՒԼԻԱ.— Ո՞ր կինը կուզեր կատարել նման հանձնարարություն:

Ավա՛ղ, խե՛ղճ Պրոտենոս,

Աղվեսին հովիվ կարգեցիր դու քո գառների վրա:

Ավաղ հիմարիս, ինչո՞ւ եմ խղճում

Նրան, ով որ ինձ ատում է սրտանց:

Որովհետեւ նա սիրում է նրան՝

Դրա համար էլ նա ինձ ատում է.

Որովհետեւ ես սիրում եմ իրեն՝

Դրա համար էլ նրան խղճում եմ:

Այս մատանին ես տվեցի նրան, երբ նա բաժանվեց,

Որ պարտադրեմ նրան ինձ հիշել,

Իսկ այժմ ես մի դժբախտ դեսպան եմ

Խնդրելու մի բան, որ չեմ ցանկանում,

Նվեր տանելու, ինչ որ չեմ ուզում ,

Գովելու, որ նա հավատարիմ է,

Մինչդեռ կուզէի հակառակն ասել:
Ես եմ ճշմարիտ սերը իմ տիրոջ,
Ուստի չեմ կարող ես անկեղծ ծառա դառնալ իր համար,
Առանց դավելու իմ իսկ անձի դեմ:
Սակայն իր համար կսիրախոսեմ,
Բայց և այնքան պա՛ղ,
Որքան երկինքը գիտե թե ինչպէս
Ես դեմ եմ նրա հաջողութեանը:

Մտնում է Սիլվիան իր սպասավորներով:

Բարի լույս, օրիորդ, ուզում եմ տիրուհի Սիլվիայի հետ խոսել.
Խնդրում եմ ցույց տալ՝ ինչպէս գնամ իր մոտ:

ՍԻԼՎԻԱ.— Ի՞նչ կասեք նրան, եթե ես լինեմ:

ՋՈՒԼԻԱ.— Եթե դուք նա՛ էք, ես կխնդրէի ձեր համբերութեանը՝
Լսել պատգամը, որի համար էլ ես ուղարկված եմ:

ՍԻԼՎԻԱ.— Ո՛վ է ուղարկել:

ՋՈՒԼԻԱ.— Իմ տերը, օրիորդ, պարոն Պրոտեոսը:

ՍԻԼՎԻԱ.— Ձեզ ուղարկել է նկարի համա՞ր:

ՋՈՒԼԻԱ.— Այո, տիրուհի:

ՍԻԼՎԻԱ.— Լսիր, Ուրսուլա, բե՛ր իմ պատկերը:

Վերցրեք նկարը, տվեք ձեր տիրոջ և ասեք նրան,

Որ ինչ որ Ջուլիա,— ում մոռանում է իր խարդախ միտքը,—

Կզարդարեր իր սենյակին ավելի, քան այս ստվե՛րը:

ՋՈՒԼԻԱ.— Օրիորդ, հաճեցեք կարդալ նամակն այս:—

Ներեք ինձ, օրիորդ, սխալմամբ տվի.

Ես ձեզ մի նամակ, որը ձերը չէ,—

Այս մեկն է ձերը:

ՍԻԼՎԻԱ.— Խնդրում եմ թույլ տառ, որ մի անգամ էլ աչքի անց-
կացնեմ:

ՋՈՒԼԻԱ.— Ձեմ կարող թույլ տալ, ներեցե՛ք ինձ, օրիորդ:

ՍԻԼՎԻԱ.— Ես՝ վերցրեք սա էլ:

Ձեմ ուզում նայել տիրոջդ դրած սողների վրա,

Գիտեմ խճողված են նրանք խոստումներով,

Եվ լի բաղմադյուռն հոր երզումներով,

Որ նա պիտ դրժե նույնքան հեշտութեամբ,

Ինչպես ես եմ իր նամակը պատռում:

ՋՈՒԼԻԱ.— Նա ուղարկել է ձեզ այս մատանին:

ՍԻԼՎԻԱ.— Մեծ ամոթ նրան, որ ուղարկել է ինձ այս
մատանին:

Հազար անգամ եմ նրանից լսել,

Որ իր Ջուլիան է սա տվել իրեն հրաժեշտի պահին,

Չնայած նրա անազնիվ մատը պղծել է դրան,

Սակայն իմ մատը Ջուլիայի հանդեպ

Չի կարող նման անարդանք ցույց տալ:

ՋՈՒԼԻԱ.— Ջուլիան ձեզանից շնորհակալ է:

ՍԻԼՎԻԱ.— Ի՞նչ ես ասում դու:

ՋՈՒԼԻԱ.— Շնորհակալ եմ ձեզանից, օրիորդ,

Որ կարեկից եք Ջուլիայի հանդեպ,

Օ, թշվառ աղքիկ. իմ տերը նրան շատ վիրավորեց:

ՍԻԼՎԻԱ.— Դուք գիտե՞ք նրան:

ՋՈՒԼԻԱ.— Գրեթե այնպես, ինչպես ինքս ինձ:

Նրա վշտերի մասին խորհելիս, երգվում եմ ես ձեզ,

Հարյուր անգամներ ես արտասվել եմ:

ՍԻԼՎԻԱ.— Անշուշտ նա գիտե, որ Պրոտեստը իրեն լքել է:

ՋՈՒԼԻԱ.— Կարծում եմ, գիտե, և դա է նրա վշտի պատճառը:

ՍԻԼՎԻԱ.— Նա գեղեցիկ է:

ՋՈՒԼԻԱ.— Առաջ ավելի սիրուն է եղել, քան Քիմա է:

Երբ նա վստահ էր, որ իմ պարոնը իրեն սիրում է,

Իմ կարծիքով նա նույնքան սիրուն էր, ինչպես դուք հիմա:

Բայց այն օրվանից, երբ մի կողմ դրեց նա իր հայելին

Եվ իր երեսից արեապաշտպան գիմակը հանեց,

Օդից խամրեցին նրա աչտերի կարմիր վարդերը

Եվ իր երեսի շուշանագույնը այնպես ավերվեց,

Որ թիադեմ է այժմ ինձ նման:

ՍԻԼՎԻԱ.— Ի՞նչ հասակ ունի:

ՋՈՒԼԻԱ.— Մոտավորապես իմ հասակին է: Հոգեզալուստին,

Երբ ցույց էին տալիս բոլոր խաղերը մեր ուրախության,

Երիտասարդները ստիպում էին ինձ կնոջ դեր խաղալ,

Եվ ես վարժվեցի օրիորդ Ջուլիայի շրջազգեստի մեջ,

Որ ինչպես բոլոր տղամարդիկն էին միաձայն ասում,

Ինձ խիստ սաղում էր,

Կարծես ինձ համար պատրաստված լիներ—
Դրա համար էլ ասում եմ, որ նա
Մոտավորապես իմ հասակին է:
Այդ օրը նրան ես ստիպեցի դառն արտասովել,
Քանզի խաղացի մի ողբալի դեր:
Դա Արիադնայի դերն էր, տիրուհի,
Որը ողբում էր Թեղեոսի խախտած երդումն ու նրա
Անարգ փախուստը,
Որն ես խաղացի այնքան կենդանի իմ արցունքներով,
Որ խեղճ տիրուհիս, նույնպես հուզվելով,
Դառն արտասովեց. և թող մեռնեմ ես՝
Թե ես չգագացի նրա իսկական վիշտը հոգուս մեջ:
ՍԻԼՎԻԱ.— Նա երախտապարտ պետք է լինի քեզ, ազնիվ

պատանի:

Ավա՛ղ խեղճ օրիորդ, անմխիթա՛ր և լքվա՛ծ,
Ես ինքս եմ լալիս, երբ քո խոսքերը իմ միտքն են գալիս:
Վերցրու պատանի, ռհա քսակն իմ, այն տալիս եմ քեզ
Քո այդ թանկագին տիրուհու սիրուն.
Որովհետեւ դու սիրում ես նրան:
Դե, մնաս բարով:

Գնում է իր սպասավորներով:

ՋՈՒԼԻԱ.— Եվ նա՛ կլինի երախտապարտ քեզ,
Եթե երբեք նրան ճանաչես:
Աղջիկ առաքինի, հե՛ղ ու գեղեցի՛կ:
Հույս ունեմ, որ իմ պարոնի սերը նա սառն կընդունի:
Եթե նա այդքան մեծարում է իմ տիրուհու սերը:
Ավաղ, սերն ինչպես կարող է պարապ խայտալ ինքն իր հետ:
Ահա իր պատկերը, ապա մի տեսնեմ:
Կարծում եմ, եթե իմ մազերն այսպես սանրված լինեն՝
Իմ երեսը նույնպես սիրուն կլիներ իր երեսի պես,
Թեպետ նկարիչը շողոքորթել է մի փոքր նրան,
Եթե ինքս ինձ չեմ շողոքորթում չափից ավելի:
Շաղանակազույն մազեր ունի նա,
Իսկ իմ մազերը լրիվ խարտյաշ են:
Թե Պրոտեոսի սիրո մեջ դա է տարբերությունը,

Ուրեմն այդ գուլնի կեղծամ կղնեմ:
Նրա աչքերը ապակու պես բիւ են, նույնպես և իմը:
Այո, բայց նրա ճակատը ցածր է, իսկ իմը բարձր է,
Թե մոլի սերը մի կույր աստված չէ,
Ուրիշ էլ ի՞նչ կա նրա մեջ վայել փառաբանության,
Որ իմ մեջ չկա:
Գնանք ստվեր, գնանք:
Վերև բարձրացրու դու այս ստվերը—
Քո ախոյանին: Դու անզգա ձե,
Քեզ պիտի պաշտե, սիրե, համբուրե և երկրպագե,
Բայց եթե նրա պաշտամունքի մեջ մի իմաստ լիներ,
Իմ արձանը քեզ կփոխարիներ:
Ծա քեզ սիրալիր կվերաբերեմ ի սեր սիրուհուդ,
Որը սիրալիր վերաբերվեց ինձ:
Թե չէ, երգվում եմ ես Յուպիտերով,
Ճանկերով դուրս կկորզեի քո շտեմնող աչքեր,
Մեռցնելու համար քո հանդեպ եղած իմ տիրոջ սերը:

Գնում է:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ցեսարաց առաջին.— Միլան. Մի մենաստան:

Մտնում է էզլամուր:

ԷԳԼԱՄՈՒՐ.— Արեւը արդեն ոսկեզօծում է
երկնակամարը արեւմուտի
Եվ այժմ մոտ է այն ստույգ ժամը,
Երբ Սիլվիան պետք է սուրբ հայր Պատրիկի մենարանի մոտ
Հանդիպի ինձ հետ:
Նա չի ուշանա. սիրահարները խիստ ճշտապահ են,
Նույնիսկ ժամից էլ առաջ են գալիս,
Այնքան որ շատ են նրանք անհամբեր:

Մտնում է Սիլվիան:

Տես արդեն եկավ: Բարի երեկո, գեղեցիկ օրիորդ:
ՍԻԼՎԻԱ.— Ամե՛ն, ամե՛ն: Ճանապարհ ընկնենք բարի էզլամուր.
Վանքապարսպի դռնակով փախչենք:
Ես վախենում եմ, որ լրտեսները հետևում են ինձ:
ԷԳԼԱՄՈՒՐ.— Մի՛ վախենաք դուք,
Անտառը հազիվ երեք մղոն է այստեղից հեռու,
Երբ այնտեղ հասնենք՝ փրկված ենք արդեն:

Գնում են:

Ցեսարաց երկրորդ.— Նույն վայրը. մի սենյակ դուքսի պալատում:
Մտնում են Տուրիոն, Պրոտեսուր և Զուլիան՝ տղայի հագուստով:
ՏՈՒՐԻՈ.— Պարոն Պրոտեսուս, ի՞նչ ասաց Սիլվիան
իմ առաջարկին:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Օ, պարոն, նա ինձ այս անգամ թվաց շատ ավելի մեղմ,

Քան թե առաջ էր:

Եվ այնուհանդերձ, ձեր անձի հանդեպ

Նա արավ մի շարք առարկություններ:

ՏՈՒՐԻՈ.— Ի՞նչ, որ իմ սրունքը շատ երկա՞ր է:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Ոչ, որ շատ բարակ է:

ՏՈՒՐԻՈ.— Ես երկարավիզ կոշիկ կհագնեմ, որ հաստ երևա:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Սերը չպետք է մղել մի բանի, ինչից խորշում է:

ՏՈՒՐԻՈ.— Ի՞նչ է ասում նա իմ դեմքի մասին:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Նա ասում է որ նա սպիտակ է:

ՏՈՒՐԻՈ.— Ուրեմն ստում է. իմ դեմքը թուխ է:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Մարգարիտները նույնպես սպիտակ են,

եվ հին առածը այսպես է ասում—

«Թուխ տղամարդիկ մարգարիտներ են

Սիրուն կանանց աչքին»:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի). Ծճմարիտն այն է, որ այդ տեսակի մարգարիտները

Ամաչեցնում են կանանց աչքերը.

Դրա համար էլ ավելի լավ է աչքերս փակեմ,

Քան նայիմ նրանց:

ՏՈՒՐԻՈ.— Ինչպես է դուր գալիս նրան իմ խոսքը:

ՋՈՒԼԻԱ.— Վատ, երբ պատերազմի մասին եք խոսում:

ՏՈՒՐԻՈ.— Եվ լավ, երբ սիրո և խաղաղության մասին եմ խոսում:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Եվ ավելի լավ՝ եթե չխոսես:

ՏՈՒՐԻՈ.— Ի՞նչ է ասում նա քաջությանս մասին:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Այդ մասին պարոն, նա չի կասկածում:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Նա կարիք չունի, երբ գիտե նրա վախկոտությունը:

ՏՈՒՐԻՈ.— Ի՞նչ է ասում նա իմ ծագման մասին:

ՊՐՈՏԵՆՈՍ.— Որ դուք ծագում եք պատվավոր տոհմից:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Ճիշտ է, այսինքն չազնվականից տխմար է ծնվել:

ՏՈՒՐԻՈ.— Հաշվի առնո՞ւմ է իմ կալվածները:

ՊՐՈՏԵՈՍ.— Օ՛, այո և խիստ ափսոսում...

ՏՈՒՐԻՈ.— Ինչո՞ւ:

ՋՈՒԼԻԱ.— (մեկուսի) Որ պատկանում են մի ավանա՛խ:

ՊՐՈՏԵՈՍ.— Որ անմշակ են:

ՋՈՒԼԻԱ.— Դուքան է այստեղ գալիս:

Մտնում է դուսը:

ԴՈՒՔՍ.— Ի՞նչ կա, պարոն Պրոտեոս, ի՞նչ լուր կա, Տուրիո.
Ո՞վ է ձեզանից տեսել էգլամուրին:

ՏՈՒՐԻՈ.— Ես չեմ տեսել նրան:

ՊՐՈՏԵՈՍ.— Ես նմանապես:

ԴՈՒՔՍ.— Տեսե՞լ ես իմ չաղջկան:

ՊՐՈՏԵՈՍ.— Ոչ էլ ես:

ԴՈՒՔՍ.— Ուրեմն ճիշտ է.

Աղջիկս փախել է այդ թշվառական վալենտինի մոտ,
եվ էգլամուրը իր ուղեկիցն է:

Դա ճշմարիտ է, քանզի անտառում

Ապաշխարելու համար շրջելիս

Նրան տեսել է հայր Լավրենտիոսը:

Նա էգլամուրին լավ է ճանաչել

եվ կռահել է, որ դա Սիլվիան էր,

Բայց որովհետև դիմակ էր հագած,

Ուստի վստահ չէ, թե նա է եղել:

Բացի դրանից, նա՞ որոշել էր այս երեկոյան

Սուրբ հայր Պատրիկի մատուռը գնալ խոստովանոթյան
եվ չի գնացել:

Եվ չայս բոլո՞րը հաստատ ասում են, որ նա փախել է:

Ուստի խնդրում եմ՝ ոչ մի բառ չասեք,

Այլ անմիջապես նստեցեք ձիեր և հանդիպեք ինձ

Ղեռան ստորոտից ելնող ճամփի վրա,
Որը տանում է դեպի Մանտուա, ուր և փախել են:
Շուտ ճամփա ընկեք, ազնիվ պարոններ, և հետևեք ինձ:

Գնում է:

ՏՈՒՐԻՈ.— Ի՛նչ անտանելի, համառ աղջիկ է,
Որ փախչում է իր երջանիկ բախտից,
Երբ սլանում է բախտն իր ետեից:
Ես պիտի դնամ գտնելու նրանց,
Առավելապես էզլամուրից իմ վրեժն հանելու,
Քան զրդված անմիտ Սիլվիայի սիրուց:

Գնում է:

ՊՐՈՏԵՍՍ.— Ե՛ս էլ կգնամ նրանց ետեից,
Առավել զրդված Սիլվիայի սիրուց,
Քան իր ուղեկից էզլամուրի դեմ ունեցած ոխից:

Գնում է:

ԶՈՒԼԻԱ.— Իսկ ես կգնամ, որ ավելի շուտ սերն այդ խափանեմ,
Քան սիրո համար փախած Սիլվիայի
Հանդեպ ունեցած ոխից զրդված:

Գնում է:

Տեսարան երրորդ.— Անտառ:

Մտնում են Սիլվիան և Ավագակները:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Դե գնանք, գնանք, և ոչ մի ծպտուն,

Մենք պետք է տանենք քեզ մեր պետի մոտ:

ՍԻԼՎԻԱ.— Հազարից ավելի ձախորդություններ

Սովորեցրել են ինձ տանել աղետն այս համբերությամբ:
ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Դե, շուտ տար նրան:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Ո՛ւր է այն պարոնը, որ նրա հետ էր:
ԵՐԿՐՈՐԴ ԱՎԱԶ.— Արագոտ լինելով նա մեզնից ծլկվեց:

Սովսեմն ու Վալերիոսը հետապնդում են:

Դու սրա հետ դնա դեպի արևմուտք,— անտառի վերջը,

Մեր պետն այնտեղ է, իսկ մենք կգնանք փախածի հուկից.

Թավուտը փակ է, նա չի կարող փախչել:

ԱՌԱՋԻՆ ԱՎԱԶ.— Արի. ես պետք է քեզ տանեմ դեպի մեր
պետի այրը—

Դու մի՛ վախենար. նա ազնիվ սիրտ ունի

Եվ անօրեն չի վարվի ոչ մի կնոջ հետ:

ՍԻՂՎԻԱ.— Ավա՛ղ, Վալենտին, ես այս տանջանքը քեզ համար
կամ կրում:

Գնում են:

Տեսարան չորրորդ.— Անտառի մի այլ մասը:

Մտնում է Վալենտինը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Սովորությունը ի՞նչ շուտ է նստում մարդու հոգու
մեջ:

Այս թավուտ անտառը, ամայի վայրերն այս

Սրտիս ավելի հարազատ են, քան պերճ քաղաքները:

Այստեղ կարող եմ ես մենակ նստել մարդկանցից անտես
եվ անմխիթար սոխակի երգին

Նառնել իմ վիշտն ու հյուսել իմ ցավը:

Օ, դու, որ կրծքիս մեջ ես բնակվում,

Մի թողնիր երկար քո տունը թափուր,

Որ ավերվելով շենքը փուլ չգա

Եվ հուշ չթողնի թե ինչպիսին էր...

Սիւվիա, շունչ տուր ինձ քո ներկայությամբ,

Դու քնքուշ փերի, գուրգուրիր լքված քո գառնարածին:

Լսվում են ձայներ:

Այս ի՞նչ աղմուկ է և իրարանցում.

Սրանք ընկերներս Նեն, որ իրենց կամքը օրենք դարձնելով,

Հետապնդում են մի դժբախտ անցորդ:
Ինձ շատ են սիրում. բայց ես դեռ պետք է երկար աշխատեմ,
Որ նրանց վայրի արարքը զսպեմ:
Քաշվի՛ր, Վալենտին, տես ո՞վ է գալիս:

Լսվում են ոտնաձայներ:

Մտնում են Պրոտեոսը, Սիլվիան և Զուլիան:

ՊՐՈՏԵՈՍ.— Օ, օրիորդ, ես ձեզ մատուցեցի այս
ծառայությունը,—

Չնայած, որ դուք շնտարբեր եք ձեր ծառայի հանդեպ,—
Վտանգի տալով իմ կյանքը ես ձեզ փրկեցի մեկից,
Որը ուզում էր ոտնակոխ անել
Թե՛ ձեր պատիվը և թե՛ ձեր սերը:
Իբրև վարձ դրան ինձ շնորհ արեք
Գոնե գեղեցիկ ձեր մի հայացքը,
Դրանից էլ շնչին պարզև ձեզանից չեմ կարող խնդրել,
Եվ վստահ եմ, որ դրանից էլ քիչ դուք չեք կարող տալ:
ՎԱԼԵՆՏԻՆ.— (մեկուսի) Որքան նման է սա մի երազի

Ինչ որ տեսնում եմ ու լսում եմ այժմ:

Սե՛ր, համբերություն շնորհիր մի պահ, որ ես ինձ զսպեմ:

ՍԻԼՎԻԱ.— Օ, ես թշվառս. վա՛յ ինձ, դժբախտի՛ս...

ՊՐՈՏԵՈՍ.— Դուք դժբախտ էիք նախքան իմ գալը,

Բայց ես իմ գալով ձեզ երջանկացրի:

ՍԻԼՎԻԱ.— Ձեր մոտենալով դուք ինձ ավելի դժբախտ եք դարձ-
նում:

ԶՈՒԼԻԱ.— (մեկուսի) Ինձ նույնպես, երբ նա մոտենում է քեզ...

ՍԻԼՎԻԱ.— Երանի քաղցած առյուծն ինձ լափեր,

Նախաճաշ լինեի վայրի գազանին,

Քան թե կեղծավոր Պրոտեոսն ինձ փրկեր:

Օ, երկինք, դու ինձ վկա եղիր թե

Ինչ խորն եմ սիրում ես Վալենտինին,

Որի կյանքը ինձ հոգուս պես թանկ է:

Եվ նույնքան մեծ է ատելությունը—

Որից ավելին չի կարող լինել,—

Որ ունեմ դաժան Պրոտեոսի հանդեպ:

Ուստի գնա՛ւ էլ մի դիմիր ինձ:

ՊՐՈՏԵՈՍ.— Մահ սպառնացող ի՞նչ վտանգավոր

Սխրագործության չէի դիմի ես

Լոկ քո մի սառը նայվածքի համար:

Օ, սիրո մեջ միակ անեծքն այն է,—

Եվ սրանով էլ կրկին հաստատված,—

Երբ կինը չի սիրում այն տղամարդուն,

Որը խենթի պէս իրեն է սիրում:

ՍԻԼՎԻԱ.— Երբ Պրոտեոսը չի սիրում նրան՝

Իրեն խենթի պէս պաշտող աղջկան:

Դու կրկին կարդա Ջովիայի սիրտը—

Քո այն անդրանիկ չքնաղ սիրածի,

Ում սիրո համար դու քո պատիվը

Հազար երգումի մաս-մաս արեցիր,

Եվ ապա բոլոր այդ երգումները

Դու ինձ սիրելու համար նենգորեն մեկ-մեկ դրժեցիր:

Դու չունես այլևս հավատարմություն,

Եթե չկան այն երկու հավատը,

Որը ավելի վատթար է, քան թե

Չունենալ ոչ մի հավատարմություն:

Ավելի լավ է՝ երբեք չունենալ,

Քան թե ունենալ երկու ազնիվ խոսք,

Որոնցից մեկը միշտ ավելորդ է:

Դու դավեցիր քո ազնիվ ընկերոջ:

ՊՐՈՏԵՈՍ.— Սիրո մեջ ո՞վ է

Ընկեր հարցնում:

ՍԻԼՎԻԱ.— Բոլոր տղամարդիկ, բացի Պրոտեոսից:

ՊՐՈՏԵՈՍ.— Ոչ, եթե քնքուշ բառերի ոգին

Չի կարող ազդել ձեր սրտի վրա

Այն դեպքում ձեզ հետ

Կսիրաբանեմ որպես մի զինվոր իմ զենքը ձեռքիս

Եվ կսիրեմ ձեզ,— սիրո բնության դեմ ըմբոստացած,—

Ուժով կտիրեմ:

ՍԻԼՎԻԱ.— Օ, երկի՛նք...

ՊՐՈՏԵՈՍ.— Ես քեզ կստիպեմ, որ դու ենթարկվես իմ ցանկու-
թյանը:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Զքվի՛ր, մարդասպան,

Վերջ տուր քո այդ բիրտ գրկախառնումին:

Դու ստոր ընկեր:

ՊՐՈՏԵՆՍ.— Վալենտին:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դու չնչին ընկեր, անազնիվ, անսեր.

Ավաղ, այդպես է այժմ ընկերը. դու ուխտադրո՛ւժ մարդ:

Դու խաբեցիր իմ բոլոր հույսերը. աչքերս միայն

Կարողացան ինձ այդպես համոզել:

Ձեմ համարձակվում այլևս չսես, որ ընկեր ունեմ,

Որովհետև դու ինձ կամաչեցնես:

Էլ ո՛ւմ հավատալ, երբ որ աջ ձեռքը դավում է սրտի դեմ:

Պրոտենս, ցավում եմ, որ էլ չեմ կարող ես քեզ վստահել

Եվ քո պատճառով խորթ եմ համարում ես աշխարհը ինձ:

Այն վերքն է խորը, որը բացվում է ընկերոջ ձեռքով:

Օ, դու ժամանակ երիցս անիծյալ,

Ամեն թշնամուց ընկերն է միակ վատթար Վշնամին:

ՊՐՈՏԵՆՍ.— Իմ ամոթն ու հանցանքը խոռվում են ինձ:

Ների՛ր ինձ, Վալենտին. եթե զղջումը

Բավարար փրկանք է հանցանքի համար

Ես այն կտամ քեզ.

Նույնքան իրական է իմ տանջանքն այժմ,

Որքան կատարած իմ հանցանքները:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Նշանակում է՝ վարձատրված եմ,

Եվ ես կրկին քեզ ազնիվ եմ ճանաչում:

Ով որ զղջումով չի բավարարվում

Նա ոչ երկնից է և ոչ էլ երկրից,

Քանզի ներում են սրանք ամեն ինչ:

Զղջումն հավերժի ցասումն է մեղմում,

Եվ որպեսզի իմ սերը երևա պարզ ու անկաշկանդ,

Ինչ Սիլվիայի մեջ պատկանում էր ինձ, բոլո՛րը քեզ կտամ:

ԶՈՒԼԻԱ.— Վայ ի՛նձ, դժբախտի՛ս...

Նվաղում է:

ՊՐՈՏԵՆՍ.— Մանկլավիկն ընկավ... Նայեք տղային:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Այդ ի՛նչ եղավ, տղա, ի՛նչ պատահեց քեզ,

Վեր՛ր նայիր, խոսի՛ր:

ՋՈՒԼԻԱ.— Օ, ագնիվ պարոն, իմ տներն հանձնարարեց

Օրիորդ Սիլվիային մի մատանի տալ,

Որ ես Դոուսցմամբ անկատար թողի:

ՊՐՈՏԵՆՍ.— Ո՛ւր է այդ մատանին:

ՋՈՒԼԻԱ.— Ահա նա, վերցրեք:

ՊՐՈՏԵՆՍ.— Ինչպե՛ս: Տուր տեսնեմ:

Սա այն մատանին է, որ Ջուլիային տվի:

ՋՈՒԼԻԱ.— Օ, ներիր, պարոն, ես սխալվեցի:

Յույց է տալիս մի ուրիշ մատանի:

Սա՛ է այն մատանին, որ ուղարկեցիք Սիլվիայի համար:

ՊՐՈՏԵՆՍ.— Բայց ի՞նչպես եղավ, որ այս մատանին ընկավ քո
ձեռքը,

ես այս մատանին մեկնելուց առաջ Ջուլիային տվի:

ՋՈՒԼԻԱ.— Եվ Ջուլիան ինքը անձամբ տվեց ինձ—

Եվ Ջուլիան ինքը դա բերեց այստեղ...

ՊՐՈՏԵՆՍ.— Ի՞նչպես, Ջուլիա՞ն:

ՋՈՒԼԻԱ.— Նաչիր դու նրան, որ թիրախ դարձավ ողջ
երդումներիդ,

եվ պահեց նրանց իր սրտի խորքում:

Քանի՜ անգամ դու ուխտազանցությամբ

Փորձեցիր նրանց արմատից պոկել,

Օ, Պրոտենոս, թող այս հագուստը կարմրեցնի քեզ:

Ամաչիր, որ դու ստիպեցիր ինձ

Հագնել այսպիսի անպարկեշտ զգեստ:

Եթե ամոթ կա ծպտված սիրո մեջ,

Ապա ավելի պակաս ամոթ է

Կանանց համար իրենց հագուստը փոխել,

Քան տղամարդկանց, փոխելու իրենց զգացմունքները:

ՊՐՈՏԵՆՍ.— Քան տղամարդկանց փոխելու իրենց
զգացմունքները...

Դա ճշմարիտ է: Օ, երկինք, եթե տղամարդը միշտ

Անաստան լիներ, նա կատարյալ կլիներ,

Այդ մի շարատը նրան լցնում է մոլորյոճանքերով,

Մղում է նրան ամեն տեսակի մեղքերի միջով:

Անվճռականությունը մեռնում է իր ծնվելուց առաջ,
Ի՞նչ կա Սիլվիայի երեսի վրա,
Որն ավելի խառն էս չգտնելի Զուլիայի դեմքին,
Եթե նայեի հաստատուն աչքով:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Դե այժմ եկեք ձեռք ձեռքի տվեք.

Թողեք հրճվանքով կնքել երջանիկ այս միությունը:
Մեծ ցավ կլինեք, եթե այսպիսի երկու մոտ ընկեք
Իրար թշնամի մնային երկար:

ՊՐՈՏԵՍՏԱՆ.— Երկինքը վկա, իղձս կատարվեց:

ԶՈՒԻԴԱ.— Նույնպես և իմը:

Մտնում են ավազակները դուստի և Տուրիոյի հետ:

ԱՎԱԶԱԿՆԵՐ.— Ավա՛ր, ավա՛ր, ավա՛ր:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Բաց թողեք, բաց թողեք, ասում եմ:

Դա դուքսն է, իմ տերը:

Շնորհափայլ տեր, ձեզ ողջունում է մի շնորհազուրկ մարդ—

Աքսորյալ Վալենտինը:

ԴՈՒԲՍ.— Պարոն Վալենտին:

ՏՈՒՐԻՈ.— Ահա և Սիլվիան— և Սիլվիան իմն է:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Ետ քաշվիր, Տուրիո,

Կամ գրկախառնվիր իսկույն մահիդ հետ,

Դու մի՛ ընկնիր իմ բարկության բերան.

Մի՛ արտասանիր, որ Սիլվիան քոնն է:

Թե մի շանգամ էլ այդ խոսքը լսեմ

Վերոնան քեզ չի տեսնի: Կանգնած է նա այստեղ.

Զփորձես մատով դիպչելու նրան,

Թող շունչդ անգամ չդիպչի սիրուս:

ՏՈՒՐԻՈ.— Պարոն Վալենտին, աղջիկն իմ փուլթը չէ:

Խելագար է նա, ով վտանգի է դնում իր կյանքը

Մի աղջկա համար, որ չի սիրում իրեն:

Նրա նկատմամբ ես պահանջ չունեմ, ուստի նա քոնն է:

ԴՈՒԲՍ.— Առավել ստոր և անարգ ես դու,

Որ ամեն միջոց դորժադրելով նրան տիրելու,

Այդքան հեշտությամբ հրաժարվում ես այժմ նրանից:

Պատվովն եմ երգչում իմ նախնիների,
Որ ես, Վալենտին, փառաբանում եմ արիասիրտ ոգիդ,
Եվ դստում եմ, որ դու արժանի ես կայսրուհու սիրուն.
Իմացիր ուրեմն, մոռացութեան եմ տալիս ես այստեղ
Առաջվա բոլոր գժտությունները,
Ջնջում եմ բոլոր ատելությունը,
Եվ կոչում եմ քեզ նորից դեպի տուն:
Իրավունք ունես նոր դիրք պահանջել
Քո անզուգական արիության համար,
Որին լի ու լի ես համաձայն եմ.—պարոն, Վալենտին,
Դու ազնիվ մարդ ես և լավ ծագումով,
Առ քո Սիլվիային, քանզի դու նրան արժանի եղար:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Շնորհակալ եմ ձեր վսեմությանը:

Այդ պարզևր ինձ հրջանկացնում է:
Այժմ, մեծդ դուքս, աղաչում եմ ձեզ ի սեր ձեր աղջկա
Շնորհել մի խնդիր, որ պիտ անեմ ձեզ:
ԴՈՒՔՍ.— Ի սեր քեզ կանեմ, ինչ էլ դա լինի:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Այս վտարված մարդիկ, որոնց ընկեր դարձա,
Օժտված են ազնիվ հատկություններով:
Դուք ներեք նրանց այստեղ կատարած մեղքերի համար,
Եվ թույլ տվեք, որ նրանք շաքորից տուն վերադառնան:
Նրանք ուղղվել են, կիրթ են և բարի
Եվ օգտակար մեծ աշխատանքների, հարգարժան տեր իմ:
ԴՈՒՔՍ.— Դու ինձ հաղթեցիր. քեզ հետ ներում եմ ես նաև
նրանց:

Վարվիր նրանց հետ համաձայն իրենց արժանիքների:
Այժմ գնանք Միլան,
Ուր մենք կավարտենք բոլոր վեճերը
Ցնծովյաժք, խիչդով և մեծ հանդեսով:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Ըամփով անցնելիս ես ինձ թույլ կտամ
Ձեր վսեմությունը զվարճացնելու
Մեր արկածների մասին պատմելով:
Ի՞նչ կարծիք ունեք այս մանկավիհի մասին դուք, տեր իմ:
ԴՈՒՔՍ.— Կարծում եմ, որ նա սիրուն տղա է—
Նա միշտ շիկնում է:
ՎԱԼԵՆՏԻՆ.— Հավատացնում եմ,

Նա տղայից էլ սիրուն է, տեր իմ:

ԴՈՒՔՍ.— Ի՞նչ եք կամենում դրանով ասել:

ՎԱԼԵՆՏԻՆ.— Թե ձեզ հաճո է, ես դա կպատմեմ ձեզ
ճանապարհին,

Որ կապշեք բախտի բերածի վրա:

Առաջ, Պրոտեոս, որպես պատիժ քեզ

Քո բացված սիրտ վեպը պիտ լսես,

Երբ այդ ավարտվի, մեր հարսանիքի օրը կլինի

Նույնպես և ձերը:

Մի հանդես, մի տուն,

Եվ մի փոխադարձ սեր ու խնդովյուն:

Գնում են:

Հերոս Թեղեոսին տվեց մի կծիկ թել, որի օգնությամբ նա կարողացավ դուրս գալ Լաբիրինթոսից՝ հրեշ Մինոտավրոսին սպանելուց հետո: Բայց Թեղեոսը լքեց Արիադնային:

Նրա աշխերը ապակու պես բիլ են.— բնագրում ասված է ապակու նման գորշագույն (grey)՝ պետք է հասկանալ կապտավուն, որովհետև այդ ժամանակ ապակին կապտավուն երանգ տւներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

—		3
Տասներկուերորդ գիշեր.— Թարգմ. Խ. Դաշտենց	. . .	15
Ոչնչից շատ աղմուկ.— Թարգմ.	. . .	113
Սխալների կոմեդիան.— Թարգմ. Խ. Դաշտենց	. . .	215
Վերոնայի երկու ազնվականները.— Թարգմ. Խ. Դաշտենց	. . .	289
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—		379